


Ռ.Մ. ՆՈՇԱՐԱՆՅԱՆ

ԵՂՎԱՐ ՇԱՀՈՒ







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

Р. М. ШИШМАНЯН

ЭДГАР ШАИН

(1874—1947)

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

Б
1559

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԿԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՆՏՐ

Ռ. Մ. ՇԻՇՄԱՆՅԱՆ


ԷԴԳԱՐ ՇԱԻՆ

(1874—1947)

ԿՅԱՆՔԸ ՈՒ ԱՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

Տեղագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ



Հարխար Շահինյան

(Գրչանկար, 1926 թ. լուսանկարից)



ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍԵՎՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատության հեղինակը հայրենադարձ նկարիչ — արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանն է: Քառասուն տարի ապրելով Փարիզում, որտեղ ապրել ու ստեղծագործել է էդգար Շահինը, նա շփվել է նկարչի հետ, մտիկից ուսումնասիրել նրա ստեղծագործական ժառանգությունը և իր գրած հետազոտությունները աշխատության մեջ վերլուծության է ենթարկել այն, վեր հանելով անվանի նկարչի արվեստի դեմոկրատական, պրոգրեսիվ էությունը և առավել նրա ստեղծագործության գեղարվեստական, հասարակական արժեքավորումը: Չնայած աշխատության պաշտպան բնույթին, նրա մեջ օգտագործված են նոր ու հետազոտված փաստական նյութեր, որոնք առանձին կարևորություն են ներկայացնում էդգար Շահինի կյանքի ու ստեղծագործության հետագա ուսումնասիրության տեսակետից: Հատկապես արժեքավոր է հեղինակի կազմած և աշխատությանը կցած՝ էդգար Շահինի ստեղծագործական գրքավոր երկերի ժամանակագրական ցուցակը:

Ռ. Շիշմանյանի ներկա աշխատությունը առաջին և առաջին միակ մենագրությունն է նշանավոր հայ նկարչի մասին և այդ իմաստով հատուկ կարևորություն է ստանում:



24648-57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անվանի հայ նկարիչ — փորագրիչ Էդգար Շահինն իր ստեղծագործական բովանդակ կյանքը նվիրել է օֆորտին: Արվեստի այդ կարևոր բնագավառում նա հրապարակ է բերել տեխնիկական այնպիսի մեծ կարողություն և սոցիալական բովանդակության տեսակետից էլ այնքան բարձրորակ գործեր, որ արդեն ներկա 20-րդ դարի սկզբներին, երբ նա դեռ նորահաս երիտասարդ արվեստագետ էր, իր տաղանդի առաջին բողբոջներից իսկ, Փարիզի նման համաշխարհային նշանակություն ունեցող գեղարվեստական միջավայրում, արժանացավ ընդհանուր, անվերապահ գնահատության և ընդհուպ դասվեց այդ ճյուղի առաջնակարգ վարպետների շարքը: Նրա թողած ժառանգությունը մեզ համար ներկայանում է որպես անգնահատելի թանկագին ավանդ և իր տեսակի մեջ ցարդ չգերազանցված գեղարվեստական արժեք:

Ի՞նչ էր ներկայացնում փորագրության արվեստը մեզ մոտ, Շահինից տուաջ: Հայկական փորագրական գրաֆիկայի պատմությունը դժբախտաբար դեռ չի ուսումնասիրված: Սակայն ցրիվ վիճակում գոյություն ունեցող փաստանյութերն ու պատմական անջատ տեղեկություններն արդեն բավարար չափով ցույց են տալիս,

որ նրա սկզբնառման և զարգացման խնդիրները, որոնք, ինչպես մյուս բոլոր առաջավոր կուլտուրա ունեցող ժողովուրդների մոտ, մեղանում ևս շարունակ պայմանավորված ու սերտորեն ընդհանրված են եղել նախ՝ տպագրական արվեստի սկզբնաուսման և հետո դրքերի մասսայական հրատարակության ու նրանց պատկերազարդման հարցերի հետ, մեզ մոտ ընթացել են առանձնապես շատ դանդաղ ու անկանոն կերպով և բացառիկ դժվարին պայմաններում:

Ճիշտ է, երկար դարերի քաղաքական ծանր լծի տակ ճնշված ու տնտեսապես աննպաստ դրույթյան մատնված ուրիշ բազմաթիվ ժողովուրդների շարքում, հայերը առաջիններից մեկն էին, որ Գուտենբերգի դժուար ծառայեցրին իրենց ազգային կուլտուրական նպատակներին, սակայն, հայկական տպարանները, որոնցից առաջինը հիմնվեց 1512 թ. Վենետիկում, շատ սովոր մեծամասնություներով, հաստատվել են ու գործել մայր երկրի սահմաններից դուրս, նախ՝ արևմտյան Եվրոպայի խոշոր կենտրոններում, և ապա՝ Մերձավոր, կամ Հեռավոր Արևելքի և կամ Ռուսաստանի մեծ քաղաքներում, ուր քիչ թե շատ աչքառու թիվ կազմող գաղթական հայերը կյանքի և ինչքի համեմատական ապահովություն ու տնտեսական տանելի պայմաններ գտնելով, ապրում էին և լքվում առաջադիմական պարապմունքների կամ մասնագիտական ստեղծագործության: Իսկ հայկական բնաշխարհը, այդ տխուր ժամանակաշրջաններին, տրնում էր բռնապետական ղանազան օկոպաների տակ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով արգելադրում էին ժողովրդի առաջադիմական ձգտումները: Այնպես, կուլտուրական վերելքի շարժումը համարյա թե բոլորովին կանգ էր առել: Որպես համոզիչ ցայտուն փաստ, բավական է ժամանակագրական թվարկման կարգով և թեկուզ պարզ հիշատակության ձևով տալ այն վայրերի անունները, ուր առաջին անգամ հայկական տպարաններ են հաստատվել: Այսպես, Վենետիկից հետո (1512 թ.), հայերը տպարաններ են ունեցել՝ Կ. Պոլիս (1563 թ.), Լվով (1616 թ.), Նոր-Ջուղա (1641 թ.), Ամստերդամ (1660 թ.), Մադրաս (1773 թ.), Պետերբուրգ (1781 թ.), Կալկաթա (1796 թ.), Մոսկվա (1820 թ.), Թիֆլիս (1823 թ.), Երուսաղեմ (1833 թ.),

Նյու-Յորք (1857 թ.), մինչդեռ նույն ժամանակաշրջաններից շատ ավելի ուշ, Հայաստանում հիմնվել են՝ սահմանափակ գործունեություն նվիրված մի տպարան էջմիածնում (1771 թ.) և ամբողջ մեկ դար հետո միայն մի ուրիշ տպարան Երևանում (1876 թ.):

Հայ ժողովուրդը զրկված ուրույն պետականությունից, զուրկ էր նաև կաղմակներով անտեսական միջոցներից, ուստի և չէր կարող համախմբվել, գորավիդ հանդիսանալ կամ ուղղություն տալ հրատարակչական այդ հեռակա, մեկուսացած գործունեություններին, որոնք ընդհանրապես կապված չէին լինելով անհատական ձեռնարկության հետ և երբեմն էլ հույսերը դրած բարերարների աջակցության վրա, տնտեսական անապահով դրույթյան մեջ քարշ էին տալիս իրենց կյանքը, որ հաճախ կարճատև էր լինում: Նյութական այդ խեղճ վիճակի հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ արտասահմանյան նույն հրատարակչական ձեռնարկությունները շատ սահմանափակ թիվ ներկայացնող ընթերցող հասարակության և հետևաբար զնորդների համար էին աշխատում: Նրանց սակավաթիվ տիրաժներով լույս ընծայած դրքերը, տեղից տեղ, գաղութից գաղութ կամ դեպի հայրենի շրջանները փոխադրելու և տարածելու հարցերն ևս բացառիկ ծախսերի կամ ծանր բարդությունների դուռ էին բաց անում: Առանձնապես խնամված, զեղարվեստական հրատարակությունները հաճախ վնասով էին գլուխ բերվում կամ հազիվ իրենց ծախսերը փակում:

Նմանօրինակ պայմանների հետևանքով, հասկանալի է, որ հայ տպագրական ձեռնարկների հետ զուգակցաբար ընթացող գեղարվեստական գրաֆիկայի առաջխաղացումն ևս չէր կարող լայն ասպարեղ գտնել: Հրատարակիչների աղքատ կացությունը չէր թույլատրում որակավոր մասնագետներին առաջ քաշել և նրանց մշտական գործ հայթայթել: Ուստի ըստ սովորության, տպագրիչները բավարարվում էին ինքնու կամ կիսակատար պատրաստություն ձեռք բերած հայ համեստ փորագրիչների պատահական աշխատանքներով:

Բացառություն էին կազմում մեծահարուստ մեկենասների նպաստներով լույս ընծայվող շքեղ հրատարակությունների պատկերազարդման դեպքերը, երբ հայ հրատարակիչները, որոնք առա-

վելուցն ունեն զանվելու եվրոպայի գեղարվեստական մեծ կենտրոններում, զիմում էին օտարազգի առավել կամ նվազ սրակյալ վարպետներին, ինչպես՝ վենետիկի Միսիթարյանները, կամ 17-րդ դարի կեսերին աչքի ընկնող գործունեություն ծավալած Ամստերդամի հայոց տպարանը: Առաջինները մշտապես հաստատված լինելով մետաղի վրա փորագրության հայրենիք հանդիսացող Իտալիայում¹, զիմում էին Իտալիայի վարպետներին: Այդ միջոցով են պատկերագրողվել, օրինակի համար՝ Ալիշանի ազգագրական-պատմական ընդարձակ երկասիրությունները, «Միսվան»-ը, «Շիրակ»-ը, «Այրարատ»-ը և այլն (1880—1890 թթ.): Գալով Ամստերդամի հայոց տպարանին, նրա ակտիվ գործունեության տարիները համընկնելով հոլանդական փորագրության ամենափառավոր շրջանին² լույս է ընծայել փորագրական արտասովոր խնամքով պատրաստված քարտեզներ ու պատկերագրող գրքեր: Այս վերջիններից առանձնապես հիշատակվում է 1666 թ. տպագրված առաջին հայերեն «Աստվածաշունչը», գարգարված 158 պատկերներով, որոնք կրում են մի հոլանդացի վարպետի փակագիր (մոնոգրամ) ստորագրությունը ձեռքած լատիներեն CVS գրերից, ընդելուզված ձևով:

Հայկական տպագրության սկզբնական շրջաններում հրատարակված գրքերի բովանդակությունը կապ չունի ժամանակակից կենցաղի ապրող իրականության հետ: Նրանք ավելի շուտ, մասսայականացնելու մտքով, վերարտադրում էին մեր հին մատենագիրների ձեռագիր երկերը, առաջին հերթին «աստվածաշնչական» կրոնաբարոյական գործերը, որոնց համար էին գլխավորաբար հատկացված, պատկերագրության գծով թափված ձիգերն ու զոհողությունները: Նրանց կատարման եղանակը փայտագրությունն էր (քսիլոգրաֆիա): Փորագրության այդ դյուրամատչելի նախնական

¹ Մետաղի վրա փորագրման գյուտը կատարվել է Ֆլորենցիացի ոսկերիչ-փորագրիչ Թոմաս Ֆինիկուերայի (1426—1464 թթ.) ձեռքով, 1452 թ.:
² Այդ շրջանը զուգահեյտում է աշխարհահռչակ նկարիչ-փորագրիչ Ռեմբրանդտի (1606—1669 թթ.) ստեղծագործական տարիներին, որի շնորհիվ օֆորտի տեխնիկան հասավ անգերազանցելի բարձր վարպետության:

ձևն է, որ հայ հին փորագրիչ վարպետները կիրառել են երկար ժամանակ, այսինքն մինչև 19-րդ դարի կեսերը:

Արդարև այդ թվականներից է, որ հայ նկարիչները սկսում են հատուկենտ գրազվել մետաղագրության (gravure en taille-douce) այսինքն՝ ոչ ցցուն, այլ մեղմորեն խորափորագրվածության տեխնիկայով: Այս ուղղությամբ շահագրգռվող հայ նկարիչներից հիշվում է Հովհաննես Քաթանյանը (1827—1894 թթ.), որն աշակերտելով Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում մետաղի դասական փորագրության վարպետ Ն. Ի. Ուսկինի մոտ, իր ուսանողական տարիներին կատարել է որոշ թվով փորագրություններ, որոնք մեծ մասամբ մնում են անհայտ: Մեզ հասել են միայն փորագրական մեկ-երկու փորձեր, որոնց ամրվեստը սակայն հեռու է իսկական վարպետության հասնող որակից:

Վերջապես, շատ ավելի ուշ շրջանում, 19-րդ դարի վերջերին է միայն, որ հայ նկարիչները ձեռնամուխ են լինում գեղարվեստական փորագրության ամենից ավելի բարդ և միաժամանակ հարուստ ճյուղին, օֆորտին: Այստեղ ևս մենք չունենք հիշատակելիք բազմաթիվ անուններ: Նախքան Շահինի հրատարակ գալը, հիշվում է միայն նկարիչ Հ. Ի. Շամշինյանը (1856—1914 թթ.), որը գլխավորաբար ապրել ու ստեղծագործել է Թիֆլիսում: Նա, մահվանից մեկ տարի առաջ (1913 թ.) գրած իր ինքնակենսագրության մեջ ասում է «... դասարանական աշխատություններից բացի, փորագրում էի սղնձի վրա օֆորտներ, ավելի քան 12 տախտակներ, որոնց մեջ կային նկարչության պրոֆեսորներ. Պ. Պ. Չիստյակովի, Ֆ. Բրունիի, Վ. Յակոբիի, Նեկրասովի և ուրիշների, նույնպես և Կովկասի մի քանի տիպերի և տեսարանների նկարները»:

Մենք առիթ ունեցանք այդ փորագրությունների մեծաքանակ մասը տեսնելու, նկարչի մահվան 40-ամյակի կապակցությամբ Երևանի Պետական պատկերասրահում կայացած երկերի ցուցահանդեսում: Նրանք բոլորը, իրականացված ուսանողական շրջանի վերջին տարիներին և օֆորտի միայն գծային տեխնիկայով, հատկանշվում են թեև իրենց գծանկարչական նուրբ զիտողականությամբ, բայց զուտ մասնագիտական տեսակետից վերցրած, ուրիշ

ոչ այլ ինչ են, եթե ոչ իր ուղին առխարխալի որոնող արվեստագետի փորձեր: Այդ վարժություններն անշուշտ կարող էին հետագայում հանգել առավել բարձր վարպետության, եթե Շամշինյանը հնարավորություն ունենար հորատելու և պահանջված փորձառությունը ձեռք բերելու:

Դժբախտաբար նրա ասլրած միջավայրն ու ժամանակի տնտեսական նեղ պայմանները փորագրական ասպարեզի համար ձեռնտու չէին, որի հետևանքով նա ստիպվեց շուտով հրաժարվել այդ ճյուղից և իր տաղանդի ուժը վերապահեց մանկավարժական շնորհակալ գործունեության, որի կողքին նաև պեյզաժային ու կենցաղային նկարչությունը:

Վերոհիշյալ պատմական հետադարձ և ընդհանուր հայացքով արդեն պարզ երևում է՝ սկզբից ի վեր ամեն կարգի խոչընդոտներով լի այն դժվարին ուղին, որով անցել է առհասարակ փորագրական արվեստի զարգացումը մեզ մոտ, դադութային դժվարին պայմաններում, իսկ նրա զեղարվեստական կարևորագույն ճյուղը կազմող օֆորտը՝ իր ծագման ժամանակներից՝ մինչև 20-րդ դարի սեմին՝ համարյա թե ձեռնհաս և արժանավոր իսկական հետևվորդ կամ ուսուցիչ չէր ունեցել: Ես հինիսն վիճակվեց, միանգամից, բացառիկ արագ և փայլուն կերպով այդ կրկնակի դերը կատարելու մեզ մոտ:

Ես հինը նախասովետական շրջանների հայկական իրականությունն առանձնահատուկ պայմանների հետևանքով, ստիպված ասլրել ու գործել է որպես Փարիզի հայ դադութի ընտիր ու վաստակավոր մեկ անգամը: Սակայն, օտար երկնքի տակ գտնվելով հանդերձ, նա ամբողջ էությունը մնացել էր իսկական հայրենասեր, անջնջելի խորը զգացումներով կապված լինելով հայ իրականության հետ: Նրա հայրենասիրական զգացումներն առավել ևս ողկվորվելով ամբապնդվեցին սովետական կարգերի հաստատումով:

¹ Պատմականորեն օֆորտը համարվում է սկիզբ առած գերմանական Եվեյցարիայի Բազել քաղաքում ծնված, Ուեստ Գրաֆի (1485—1528 թթ.) աշխատություններով (1513 թ.): Ալբրեխտ Դյուրերի (1471—1528 թթ.) ժամանակակից այդ փորագրիչը նախապես աշխատում էր փայտագրության մեջ, հետևելով գերմանացի այս աշխարհաշուշակ վարպետի ուղղությունը:

Նա իր ամբողջ հոգով սիրում էր մեր վերածնվող նոր հայրենիքը: Դրա ամենափայլուն ասպարեզը տվեց 1936 թ., Երևանի Պետական պատկերասրահին նվիրելով շուրջ 160 ընտրելագույն երկերից բազմաթիվ իր օֆորտների հավաքածուն:

Ես հինի կյանքին և ստեղծագործություններին ծանոթացնելու նպատակը հետապնդող ներկա մենագրությունը լրիվ և սպառիչ լինելու հավանություն չունի: Ես հինի բեղուն, հետաքրքիր կյանքի ինչ-ինչ կողմերը անշուշտ կարելի է ավելի մանրամասն կերպով բացահայտել. դրա համար հարկավոր է մասնավոր հետազոտություններ կատարել նրա երբեմնի ասլրած անմիջական շրջապատում, քանի դեռ մահից հետո անցած ժամանակը շատ երկար չէ: Կարելի է նրա ստեղծագործություններից վերցնել ավելի բազմաթիվ նմուշներ և ընդարձակորեն վերլուծել. — կարելի է մանավաճ, տեղում կատարված նոր պրպատումներից հետո, ամբողջացնել մեծ վարպետի գործերի ժամանակագրական, լրիվ ցուցակը, քան այն, ինչ որ կարողացել ենք անել մեր ուսումնասիրության վերջում: — Կարելի է նույնպես, Փարիզում, մասնավորների գրադարաններում, մոտիկից տեսնել Ես հինի օֆորտներով պատկերազարդված՝ հայտնի հեղինակների մի շարք գործերը, որոնք հազվագյուտ լինելով, մատչելի չեն հասարակությանը և չկան այստեղ, մեզ մոտ, ավելի հանգամանորեն ուսումնասիրվելու համար:

Մեր ներկա աշխատության ի կատար ածմանը, որպես լրացուցիչ և թանկագին նպաստ հանդիսացան՝ նախաճովետական և սովետական շրջաններին Ես հինի ստեղծագործությունների սովետական երկրներում և առանձնապես Հայաստանում գտած ջերմ ընդունելության թողած հետքերի շոշափելի փաստերը, որոնց հետ մոտիկից կարողացանք ծանոթանալ մեր Հայրենիք վերադառնալուց հետո: Այս առթիվ շնորհապարտ զգացմունքով կհիշատակենք այն անվերապահ լայն աջակցությունը, որ ցույց տվեցին մեզ Երևանի Պետական պատկերասրահի հաջորդական վարչությունները, որոնք մեծ հաճոյակատարությամբ՝ մեր տրպամագրության տակ դրին հայ մեծ գրաֆիկի հավաքածուն և նրանցով կազմակերպված ցուցահանդեսների վերաբերյալ փաստաթղթերը: Իսկ ուսումնասիրությանս զլխավոր ատաղձը կազմեցին այն տեղեկու-

Յլումները, որոնք առիթ էին ունեցել ժամանակին քաղել և հա-
վաքել Փարիզում, առանց հրատարակչական կանխամտածված
որոշ ծրագրի, այլ պարզապես հետեւելով վազուց ի վեր բնկալ-
ված մեր սովորութեանը, որով միշտ ուղեցել ենք նպատակ հալ
արվեստի անցյալի՝ որպէս ուսանելի թանկագին կուլտուրական
ավանդի՝ ծանոթացման ու վերարժարման գործին: Շահինի մա-
սին, մեր կատարած այս առաջին և զժվարին քայլը, հուսով ենք,
որ կարժանանա սովետական արվեստասեր լայն հասարակութեան
ուշադրութեանը:



1

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Էդգար Պետրոսի Շահինը ծնվել է 1874 թ. հոկտեմբերի
31-ին, Վիեննայում, ուր ժամանակավորապես գտնվում էին նրա
ծնողները:

Հայրը՝ Պետրոս Շահինը, ծագումով Ակնեցի, բնտանեկան
մնայուն բնակութիւնն էր հաստատել Պոլսում, ուր ծառայում էր
պետական մի հիմնարկութեան մեջ:

Մայրը՝ Նեմզիկ (Նոյեմզար) Սերոբեյանը, Մուղամիայի Սուլա-
վա քաղաքից էր (Բուկովինայի շրջան), ուր կար 1670-ական թվա-
կաններից ի վեր հաստատված հայկական գաղութ:

Շահինի ծնողներն ապրելով բարեկեցիկ պայմանների մեջ,
Պոլսի եվրոպական թաղամաս՝ Պերայում, կարողացան հոգածու
լինել իրենց միակ որդու Էդգարի կրթութեանը:

Նա միջնակարգ ուսումն ստացավ Պոլսի ծովահայաց արվար-
ձաններից մեկի Բազիլեդոնի (Գազը-գյուղ) Մխիթարյան դպրո-
ցում, որտեղ նկարչութեան դասատու էր պոլսահայութեան հայտնի
նկարիչներից Մելքոն Տիրացույանը (1837—1904 թթ.). վերջինս

իր մասնագիտական կրթությունը ձեռք էր բերել Իտալիայում, որ-
պես Մխիթարյան սան:

Պատանի Շահինը, ուսման ընթացքում բացառիկ ձիրք էր ցու-
ցաբերում դեպի նկարչական արվեստը: Այդ շրջանից ծանոթ է
ներա գրաֆիկական մի աշխատությունը, կատարված գրչով և շի-
նական մեկնով, շրջանավարտ լինելու տարին (1890 թ.): Նկարը
ծաղիկներով, ծիծեռնակներով և գարնանային գեղջկական տեսա-
րանով պատկերազարդված մի գեղազիր ձոն է, նվիրված իր դաս-
տիարակ ուսուցիչ Հ. Աբր. Վ. Ճարիին նրա գործունեության 50-
ամյա հոբելյանի տոնակատարության առթիվ (25 մայիսի,
1890 թ.): (Տես նկար 1):

Այդ աշխատության մեջ, 16-ամյա Շահինը, արդեն հայտնա-
բերում է նկարչական կոմպոզիցիայի, ճաշակի նրբության և կա-
տարման տեխնիկայի բացառիկ հատկություններ, որոնք կանխա-
տեսել են տալիս ապագա վարպետ փորագրիչը:

Նույն տարին Շահինի մոտ ուժեղ կերպով արտահայտվում է
նկարչության հետեկու ցանկությունը: Մնողներն էլ հակառակ
չէին, բայց որպեսզի իրենց զավակը օտար երկրներ գնալով չհե-
ռանար ընտանեկան հոգատար շրջանակից, ուղում էին, որ նա,
գեթ ժամանակավորապես հաճախեր Պոլսի պետական գեղարվես-
տական վարժարանը:

Սակայն նրա ուսուցիչ Մ. Տիրացույանը այդ կարծիքին չէր,
նա խորհուրդ է տալիս Շահինին գնալ ուղղակի Իտալիա, Վենետի-
կի գեղարվեստական միջավայրում պատրաստվելու նկարչական
ասպարեզի համար, տեղի Մխիթարյան ուսումնարանի խնամածու-
թյան ներքո:

90-ական թվականներին, Թյուրքիայի հայոց քաղաքական
դրությունը գնալով անհանդուրժելի էր դառնում: Սուլթանական
հորդանները անսանձ կեղեքում, ճնշում էին հայ ժողովրդին, որի
հետևանքով՝ արտագաղթի հոսանքը զգալի չափերով ավելանում
էր, իսկ Թյուրքիայում մնացող հայերը հուսահատական վիճակ էին
ապրում: Նրանք այլևս անվստահություններ և տարակուսանքով էին
նայում պետական խոստումների և ամեն տեսակ ձեռնարկների



Լ. Շահինը երիտասարդ տարիքում
(1900 թ. տպագրված մի լուսանկարից)

24648-57

վրա, թեկուզ լինեին նրանք կուլտուրական նպատակների նվիրված ձեռնարկներ, ինչպիսին էր Պետական Գեղարվեստական վարժարանը:

Կերպարվեստի ասպարեզին ձգտող նորահաս երիտասարդությունը այլևս հակում ցույց չէր տալիս դեպի այդ հաստատությունը, շնայած որ՝ այնտեղ միշտ պաշտոնավարում էին հայազգի տնօրեն, տաղանդավոր քանդակագործ, Նրվանդ Ոսկանը և եվրոպացի նկարիչներից բաղկացած ուսուցչական մի մարմին:

Իր աշակերտի բարձրագույն կրթության մասին մտահոգվող Մելքոն Տիրացույանը լավ գիտեր նաև, որ Պոլսի միջավայրը՝ բացի հնությունների նորահաստատ թանգարանում գտնվող հունական մի քանի արվարձաններից՝ չուներ բնավ դասական վարպետների ընտիր երկերից կազմված հավաքածուներ, որոնք Իտալիայում կամ եվրոպական այլ երկրների խոշոր կենտրոններում ուսուցողական մեծ դեր են կատարում նոր սերունդների գեղարվեստական պատրաստության համար:

Այս բոլոր պատճառները ի վերջո ստիպում են Շահինին մեկնել դեպի Իտալիա, Վենետիկ, ուր Մուրադ—Ռաֆայելյան ուսումնարանում սկսում է հետևել իր սիրած նկարչական արվեստին:

Ուսումնարանի մեջ Շահինին թույլ էր տրված շմասնակցել հանրակրթական առարկաներին, այլ միայն նեկարչությամբ էր պարապում ուսուցիչ ունենալով տեղացի նշանավոր վարպետ գեղանկարիչ Անտոնիո Պաոլետտին¹, որի մոտ իրեն աշակերտակից էր նաև հետագայում հայտնի նկարիչ Կարապետ Աղամյանը (1872—1947 թթ.), որը նույնպես օժտված մի ուսանող Պոլսից ուղարկվել էր այնտեղ:

Իտալացի խստասպասանչ ուսուցիչը, իբր նկարչական վարժություն, իր երկու աշակերտներին դրշով ընդօրինակել էր տալիս, ի միջի այլոց, Տիեպոլոյի օֆորտներին նմուշներ, և որպեսզի նրանք չփորձվեն մեխանիկորեն վերարտադրել, ստիպում էր տարբեր չափսերով կատարել այդ ընդօրինակությունները:

¹ Անտոնիո դ'Էրմոլաս Պաոլետտի, Վենետիկի 19-րդ դարի վարպետներից, հայտնի է որպես կենցաղագիր (ժանրիստ) նկարիչ:



Նմանօրինակ աշխատություններով Շահինը ձեռք է բերում, տեսողական վարժության հետ, դժանկարչական մեծ ձևունություն, որը հիմնական դեր պիտի կատարեր հետազայում, փորագրական ասպարեզում:

Սակայն, հարկ է այստեղ նշել, որ այդ սկզբնական տարիներին նա որևէ հակում ցույց չի տալիս արվեստի փորագրական ճյուղին: Յուզանկարն էր նախընտրած առարկան և դեպի այն էին կենտրոնանում նրա ստեղծագործական ճիգերը: Այդ ուղղությամբ կենտրոնանում էր նաև ուսուցիչը, որը Շահինի բնականից կանրան քաջակերում էր նաև ուսուցիչը, որը Շահինի բնականից կատարած յուզանկար էայուղներում ցուցաբերած նրբերանգային (տոնային) փոխհարաբերությունների ճիշտ բմբոնումը, գունային նպատակահարմար ծեփը, միջավայրի ճշմարիտ վերարտադրման հատկությունները տեսնելով ասում էր. «Գժանկարչական ճանապարհով եթե շարունակես, ոչինչ դուրս չի գա քեզանից, բայց դունանկարչության մեջ կարող ես հաջողություն գանել»:

Այդ կանխակալ դատողությունը հիմնովին պիտի ժխտվեր Շահինի ապագա գործունեությունով. սակայն՝ այդ ժամանակ, իրողությունն այն էր, որ երիտասարդ արվեստագետի մոտ հայտնվում էին առավելապես գեղանկարչական բացատրիկ ընդունակություններ:

Շահինը մեծ օգուտ քաղեց վենետիկի գեղարվեստական բացառապես ճոխ միջավայրից, ապրելով Արևելքը հիշեցնող նրա պայծառ մթնոլորտում, ման գալով նրա հնամենի նկարչագեղանկուններում, արևադօծ քարափններում, դիտելով՝ իրենց ակնախբաթիդ լույսով ողողուն տեսքը ջրանցքների մեղմածուխի մակերեսին վրա կենդանի վետվետումներով ցուլացնող հրաշակերտ պալատները, և առավել ևս նրանց մեջ դարերի ընթացքում կուտակված արվեստի անսպառ գանձերը:

Նա, որպես ուշիմ և խորազնին դիտող, երկարորեն կանգ էր առնում, վայելում էր և ընտելանում վերածնունդի վենետիկյան ճոխերանգ գալրոցի մեծ ներկայացուցիչներ՝ Բելլինիների արևելաշունչ նկարներին, Տիցիանի խաղաղ ու վեհ հոգիով դրոշմված գեղեցկության տիպարներին, Տինտորետտոյի՝ խռովահույզ սակայն և թափանցող ռեալիզմով ցայտուն արվեստին, վերոնեղի՝ երանգով

ու բովանդակությամբ հարուստ կոմպոզիցիաներին, և վերջապես Ջիորջոնի՝ ինչպես Շահինն ինքն էր ասում՝ «գմայլելի, խենթենալիք տաք գույներին»:

Սակայն Շահինի մոտ բնավ որևէ հակում չծնվեց դառնալու տարբեր ժամանակի ու կենցաղի պատկանող այդ անզուգական վարպետներից մեկի կամ մյուսի հյու հետևորդը: Նա բավարարվում էր նրանցից վերցնելով միայն արհեստագիտական, աշխատելակերպի այլազանություն, ճաշակի նրբություն, կամքի հարատևության գերընտիր դասեր, որով մի օր ինքն էլ ի վիճակի պիտի չիներ իր ապրած ժամանակի կենցաղային պատկերը տալու, ինքնուրույն արվեստով:

Վենետիկի աշակերտական շրջանը տևեց համեմատաբար կարճ, 1890—1892 թթ., որից հետո Շահինն անցավ Փարիզ, այնտեղ ալելի ևս կատարելագործվելու և ժամանակակից արվեստի նորություններին հաղորդվելու համար:

Փարիզում նա հաճախեց «Ակադեմի ժյուլիան»-ի նկարչական ազատ ուսումնարանը, ուր շուրջ մի տարի սովորեց նոր դասական ուղղության պատկանող վարպետներ Բենժամեն Կոնստանի և Ժան-Պոլ-Լորանսի հսկողության տակ: Փարիզում 1895 թ. իրեն հետ էր ապրում իր հոգածու մայրը:

Շահինն այնուհետև ուրիշ կրթական բարձրագույն հաստատություններ չհաճախեց: Հետագայում զանազան առիթներով ցուցաբերած լայն հմտությունն ու գիտելիքների հարուստ պաշարը նա ձեռք բերեց ինքնազարգացման զծով, շնորհիվ իր բնածին ուղիմության և գիտելու, բմբոնելու, տրամաբանելու խորաթափանց կարողություններին, ու նաև, պետք չէ մոռանալ, իր անխոնջ աշխատասիրության:

Ինչպես վենետիկում, Փարիզում ևս Շահինը մի քանի տարի շարունակեց օգտագործել միայն մատիտն ու յուզաներկը: Հետաքրքիր է հիշել այդ առաջին գործերից մի քանիսը, որոնց թեմաները՝ հենց սկզբից՝ բնորոշում են Շահինի ապագա երկերի մեծագույն և կարևորագույն մասի ներկայացրած սոցիալական բովանդակությունը:

Առաջին կտավը, որ ուղարկում է 1896 թ.-ի «Սալոն»-ին¹ և ժյուրիի կողմից ընդունվում, կոչվում է «Չֆավոր մուրացիկը»։ Կայտեղ պատկերել էր մի սովալլուկ ծեր մարդ, մազերն ու միրուրը անխնամ ցրվածության մեջ, մեկուսացած մի կապելայի մթին անկյունում, ոսկրի նման կարծր մի առարկա ջղաձգորեն խածնելիս: (Տես նկար 2):

Շահինը այդ նկարի մեջ, չնայած կատարողական մի քանի թերություններին, արդեն հայտնաբերում է դիտելու և արտահայտելու ուժեղ կարողություններ և իսկական նկարչի խառնվածք:

Հաջորդ տարին «Սալոն» է ուղարկում «Փողոցի մի անկյուն» նկարը, որ արևի երեկոյան շողերի տակ Շահինը ցույց է տալիս Փարիզի հին փողոցներից մեկի անկյունում քաղցածների մի ամբողջ ընտանիք, որը խմբվել է թղթի մեջ դրված խորոված գետնախնձորների շուրջը:

Շահինը իր ստեղծագործական առաջին իսկ քայլերով արդեն ուղղվում է դեպի մարդկային թշվառ վիճակների ուսումնասիրությունը: Աշխատում է հոգեկան խոր զգացմամբ և իրական գույներով նկարագրել օբյեկտիվ իրականությունը: Մարդկային թշվառությունը, ամենից առաջ, կապվում է նյութական չքավորության հետ, իսկ չքավոր մարդու ֆիզիկական դիմագիծը տանջող նախնական զգացումը չհագեցված քաղցի, նրան գոհացում տալու անհրաժեշտ պահանջի տագնապալի զգացումն է:

«Չքավոր մուրացիկը» ներկայացնող նկարում Շահինը, անթույլանալով իր սոցիալական երևույթի պատկերացումը տալիս է մեկուսացած ձևով, սովածությունն արտահայտելով մի անհատի մեջ: Սակայն երկրորդ նկարում, նույն պատկերացումն որոշ շափուկ արդեն ստանում է հավաքական բնույթ. միևնույն աղքատության մատնված բախտակիցներ, հավաքաբար իրենց նիհար միջոցներից տրամադրելով և կամ խմբի անդամներից մինը՝ առա-

¹ Սալոն բառը (ֆրանսերեն՝ salon) նկարչական լեզվի մեջ նշանակում է պարբերական կամ տարեկան ցուցահանդես: Ներկա ուսումնասիրության ընթացքում «Սալոն»-ը (առանց քաղցուցիչ բացատրության) նշանակում է «Արտիստ ֆրանսե» («ֆրանսիացի արվեստագետների») ընկերության սարքած տարեկան ցուցահանդեսները:

տաձևն ընկերասիրությամբ՝ իր համեստ քակից վճարելով զնել են մի քիչ խորոված գետնախնձոր, միասնաբար մեղմելու համար իրենց անոթությունը: Հազվադեպ չէ հանդիպել նման տեսարանների Փարիզյան աղքատ թաղերում, որ աշխատավորներից շատերն ի վիճակի չեն ճաշարան մտնելով հագուրդ տալու իրենց սովածությունը:

1897 թ. նույն «Սալոն»-ն այցելող տեսաբաններից Արսեն Ալեքսանդրը, խոսելով Շահինի հիշյալ կտավի մասին, գրել է թե նա ցուցահանդեսում ներկայացված «Բարքերի լավագույն պատկերներից միսն է»: Այդ վկայությունը ցույց է տալիս, որ երիտասարդ գեղանկարիչը սկսել էր արդեն նկարչական հասարակության ուշադրությանն արժանանալ: Շահինը շարունակում է մասնակցել «Սալոն»-ին և 1898 թ. այնտեղ է ուղարկում երկու կտավ. նրանցից մինը «Ներքևակար» (Ինտերիեր) անվան տակ ներկայացնում էր բանվորական ընտանիքի անշուք կենցաղը ընթրիքի պահին: Իսկ մյուս նկարը կոչվում էր «Ապաստանարանը» կամ «Շնչահեղձ կիճը», որտեղ պատկերված է լքված և հուսահատության վերջին աստիճանին հասած մի մայր, որն ածխաթթվով անձնասպանություն է զիմել իր զավակի հետ: Այդ տեսարանի մեջ թշվառությունն արդեն հանգում է մարդկային սուր ողբերգության:

Հաջորդ ցուցահանդեսին Շահինից ընդունվում են դարձյալ երկու յուզանկար աշխատություններ, որոնցից առաջինը «Մի փողոց Մոնմարտում» ներկայացնում է վերջալույսի ցուրքերի տակ աղքատ թաղերից վերցրած մի տեսարան, մինչդեռ երկրորդը ցուցաբերում էր մի արտասովոր կերպար, «Փողոցային մառդը», Փարիզի հրապարակներից մեկում, արձանի տակ կծկված թափառաշրջիկ մի մարդ, որի ահարկու նայվածքից արտածորում է միաժամանակ հուսահատությունն ու ատելությունը:

Փոքր ինչ վիպական ոգով հղացված, բայց և այնպես իրականության ճշմարտացի պատկերը հանդիսացող այդ բոլոր ստեղծագործություններով՝ որոնք ցուցադրում էր «Ողբալի կյանքը» ընդհանուր տիտղոսի տակ՝ Շահինն աստիճանաբար հայտնի էր դառնում որպես խոստումնալից, տաղանդավոր գեղանկարիչ. և եթե այդ ուղղությամբ շարունակել, կարող էր աչքառու դիրքերի հասնել. բայց անզի ունեցավ մի անակնկալ շրջադարձ, որի հետևանքով նա սկսեց սերտորեն կապվել փորագրական արվեստի հետ:

ՇԱՀԻՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՖՈՐՏԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Շահինի՝ դեպի փորագրութեան ասպարեզը կատարած արագ թերումը դիտարկողական պարագաների արդյունք եղավ: Նա մի օր, ֆրանսիացի բնկերներին մեկի աշխատանոցում ահանատես լինելով օֆորտի՝ կատարմանը, ծանոթացավ նրա տեխնիկային, հետաքրքրվեց մոտիկից և սկսեց այդ եղանակով փորձեր անել:

Օֆորտ, մետաղի վրա կատարված փոս կամ խոռչավոր փորագրութեաներից ամենահարուստ տեխնիկա ներկայացնող եղանակն է: Նրանով ստացված գրաֆիկական պատկերացումներն ամենից ավելի են մոտենում դեղանկարչության մեջ ձեռք բերած լույս-ստվերի և տոնային նրբերանգ խաղերի գեղարվեստական սպավորութուններին:

Օֆորտի իրագործման դասական և ամենապարզ աշխատակերպը կայանում է հետևյալ հաջորդական երեք գործողութունների մեջ: Ա.— փորագրիչ արվեստավորը գծագրական հասարակ մեթոդներով առաջադրված մոտիվը կամ պատկերը փոխադրում է պղնձի տախտակի մակերեսի վրա, որը կանխապես ծածկված է լինում հատուկ ջնարակով (կարծր կամ փափուկ լոֆ): Բ.— Այնուհետև փոխադրված նույն պատկերի վրա սկսում է կատարել փորագրության բուն գեղարվեստական աշխատութունը սրածայր գործիքների միջոցով, ինչպիսին են գրացր (резец) կամ զանազան տեսակի նուրբ ասեղներ: Սույն աշ-

Ձեռք բերելով պղնձի տախտակներ, հետամուտ եղավ շոր ասեղի՝ տեխնիկայով փորագրութուններ կատարել իր աշխատանոցում: Մի քանի կարճ խարխափումներից հետո արդեն նրան հաջողվում էր պղնձի վրա պատկերել բավական բարդ թեմաներ, որտեղ երևում էին փարիզյան մայթերում դիտված թափառական թշվառների կերպարները, որոնք արդեն առարկա էին դառել իր յուզանկար աշխատութուններին, կամ՝ հիշողությամբ նկարված արեելյան ժողովրդական տիպարներ, ինչպես օրինակ՝ «Թուրքիո գնչուները», «Խափշիկ կիներ» և այլն: Վարժութեան համար կատարված այդ փորձերը հիացմունքով էին դիտվում ոչ միայն արվեստագետ բնկերների և բարեկամների շրջանակում, այլև դժվարահաս թննադատների կողմից: Նմանօրինակ փայլուն սկզբնավոր-

խատութունը, պղնձի վրա գծված մասերում բաց է անում ջնարակի նուրբ խավը, մետաղի այդ ազատված մասերն են, որ ապա ենթարկվելով բուրակակաճ քրվի (зотная кислота) առավել կամ նվազ ջրախառն լուծույթի (օֆորտ, ֆրանսերեն՝ eau-forte) — ազդեցությանը փորագրվում են պահանջված խորութեամբ քստ քիմիական միջավայրի մեջ թողված ժամանակի տեղութեան: Գ.— Վերջապես փորագրութունն ավարտած համարելով, նրա բուր խոռչները տպագրական թանարով հազեցնելուց հետո, հատուկ մամուլի միջոցով, թղթի վրա սպում են այն և ստանում պատկերի մի սկզբնական օրինակը, նրա փորագրական փորձը, որը գոհացուցիչ չլինելու դեպքում կարելի է պղնձի տախտակի վրա կատարել սրբագրութուններ, բարեփոխութուններ մտածել այնտեղ, քստ պահանջի, մասնակիորեն կրկնելով վերահիշյալ գործողութունները, կամ դիմելով օժանդակ գործիքների միջամտությանը ինչպիսին են Բեռցըր (екрабок) կամ փայլոցը (пощило): Ստացված վերջնական պատկերն բնորոշված սովորության համեմատ նույնպես կոչվում է օֆորտ:

Չոր ասեղ է անվանվում օֆորտի շատ բնդհանրացած այն տեսակը, որը ձեռք է բերվում կարծր պողպատից պատրաստված մասնավոր սուր ասեղների միջոցով, որոնք գործածվում են մատիտի նման անկաշկանդ կերպով, սկզբից ջնարակ չունեցող, կամ աշխատանքի բնթացքում նրանից զերծ կացուցված պղնձի մակերեսի վրա, առանց քիմիական լուծույթի միջամտության, մի բան որ ինքնին բացատրում է արդեն չոր ասեղ անվանումը:

Չոր ասեղի կիրառութունը տալիս է նուրբ, սրածայր վերջավորութուններով և թավշային փափկութուն ներկայացնող գծեր, որոնք (լինեն խաչաձև թե զուգահեռ) ակնահաճո կերպով են անգրագանում ստացված պատկերի վերջնական սպավորության վրա, տալով նրան զգացման ջերմութուն և քնքրություն:

րության հանդեպ, Փարիզում փորագրական գործերի հրատարակիչ և վաճառորդ էդմոն Սալո հայտնի հաստատությունը սկսեց շահագրգռվել Շահինի օֆորտներով և առաջարկեց նրան պայմանագիր կնքել իր ստեղծագործությունների տպագրման, ցուցադրման ու վաճառման համար:

Շահինն ընդունում է ներկայացված առաջարկը: Նա մինչև այդ՝ ծնողների աջակցությամբ էր ապրում, բայց ուզում էր ասպազի համար նյութական ասպահովություն ձեռք բերել, ու այլևս տնտեսապես անկախ դառնալ: Ստորագրած պայմանագիրը գոհացում էր տալիս իր այդ ցանկությունը:

Ամեն կողմից քաջալերված ու նյութապես էլ ասպահովված, Շահինը նոր եռանդով ու լարվածությամբ շարունակում է ուսումնասիրել և ստեղծագործել ամբողջովին նվիրվելով օֆորտի արվեստին:

Անհավատալիորեն կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվում է ոչ միայն տիրապետել օֆորտի մասնագիտական բոլոր նրբություններին, այլ նրանց վրա ավելացնել աշխատելու ինքնուրույն եղանակներ:

Փարիզյան մամուլի էջերում, արվեստի հեղինակավոր քննադատներ սկսեցին առանց վերապահության դրվատել Շահինի նորահաս տաղանդը՝ համեմատելով նրան արդեն համբավ շահած մեծ վարպետների հետ:

Արվեստաբան Կլեման Ժանենը, ընդգծելով Շահինի ստեղծագործությունների մնայուն արժանիքները, 1899 թ. պատրաստում է նրա սկզբնական 25 փորագրությունների ցուցակը: Մի տարի հետո «Կադեթ դե Պոզաո» ժուռնալում, ուրիշ մի հայտնի հրատարակագիր նույնպես նշում է նրա ստեղծագործությունների հարաճուն բնույթը:

Փարիզի 1900 թ. համաշխարհային ցուցահանդեսին մասնակցած օֆորտների համար Շահինը ստանում է ոսկե մեդալ: Նրա տաղանդի համբավը արագ կերպով տարածվում է ոչ միայն Փարիզի գեղարվեստական շրջաններում, այլ նաև ուրիշ երկրներում, ինչպես Իտալիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլուր:

Արդարև՝ այդ ժամանակները, ռուսական պատկերազարդ

հրատարակության «Միր իսկուսուվա» պարբերականի 1901 թ. փետրվար-մարտ համարը «Թը արտիստ» անգլիական գեղարվեստական ժուռնալից արտատպելով, տալիս է Շահինի հայտնի օֆորտներից «Շառո Ռուժում» և «Մեհարան» նկարների վերարտադրությունները:

Նախա-նաֆայելյան շարժման մասին իր հրատարակած ուսումնասիրություններում հայտնի, անգլիացի գրող և քննադատ Գաբրիել Մուրեն «Թը Ստուդիո» անգլերեն գեղարվեստական ժուռնալի 1901 թ. № 15-ում «Մի հայ փորագրիչ» խորագրի տակ քննարկելով հոդված է նվիրում Շահինին, 8 ընտիր օֆորտների վերարտադրությամբ: Այնտեղ խոսելով մեր երիտասարդ վարպետի կյանքի ու արվեստի մասին, շեշտում է առանձնապես նրա ռեալիզմը, ասելով՝ «...Ճշմարտության հանդեպ մեծ հարգանքով տարված՝ նա ո՛չ շափազանցում է, ո՛չ փոքրացնում... բեմադրական նվազագույն մտահոգությամբ, այնքա՛ն որքան անհրաժեշտ է ստեղծելու համար միջավայրը...» և վերջում նկատում է Շահինին՝ որպես «...բարձր դասի արվեստագետ, որն իր շատ նուրբ զգայնությամբ, պատկերելու ճշգրտությամբ, իր տեխնիկայով շահած է բոլոր նկարիչների և քննադատների հարգանքն անխտիր: Նա մի բարեխիղճ աշխատող է և ճշմարտությունը փնտրում է անխոնջ կերպով»:

Գ. Մուրեն, ոգևորված Շահինի փարիզյան օֆորտներով, հետագայում հրավիրում է նրան (1903 թ.), ինքնատիպ փորագրություններովը պատկերազարդել իր գրած՝ «Տոնավաճառի մարդիկ Փարիզում» գեղարվեստական երկը:

Նույն տարին, պատկերազարդելու համար Շահինին են հանձնում նաև Անատոլ Ֆրանսի «Կատակերգական պատմություն» և Օկտավ Միրբոյի «Նախասենյակում» երկերը:

1903 թ. Վենետիկում կայացած Համաշխարհային ցուցահանդեսին Շահինը մասնակցում է 20 օֆորտներով, որոնց համար նա ստանում է սակավաթիվ ոսկե մեդալներից մինը, որը սովորաբար տրվում էր արվեստի անդուգական գործերի համար: Արդարև, այդ նշանակալի հաջողության արժանացող 20 աշխատությունների շարքումն էին իր գլուխ գործոցներից մի քանիսը՝ «Ջուլիա Ֆրանսը»,

«Բերասան Լեռանը» (Յափառական հրեայի դերում), «Անգործը», «Տապալակ ծեր որմնաղիրը», «Անատոլ Ֆրանսը», «Ապուրի բաշխումը» և ուրիշներ, որոնց մասին մենք կանդրադառնանք ուսումնասիրության ընթացքում:

Ֆրանսիայում ծանոթ գրող և արվեստի քննադատ Գյուստավ Սուլինեն, որը Վենետիկի ցուցահանդեսի զեղարվեստական բաժնում որպես ժյուրիի անդամ նպաստավոր դեր էր կատարել վերոհիշյալ պարզևր Շահինին հատկացվելու գործում, երկու տարի հետո զրվատում է նրա ստեղծագործական բեղուն գործունեությանը, ընդարձակ մի հոդված նվիրելով նրան:

Այդ հոդվածի մեջ, որը տպվեց ֆրանսիական «Դեկորատիվ արվեստը» պարբերականի 1905 թ. հունվարի արտակարգ համարում երիտասարդ վարպետի 18 ընտիր փորագրությունների վերաբարտադրություններով, ի միջի այլոց հայտնվում էր, որ մինչև այդ թվականը Շահինի հրապարակ բերած օֆորտների քանակը հասնում էր 200 փորագրած տախտակի:

Այդ վկայությունը ինքնին բավական է ցույց տալու համար հայ փորագրիչի եռանդուն գործունեության արտասովոր թափը, որը, զեթ սկզբնական 5—7 տարիների ընթացքում, հասնում էր մի քանի նշանավոր հին վարպետների, ինչպես՝ պրակացի օֆորտիստ Վ. Հուլարի կամ խտալացի Յ. Պ. Պիրանեսկիի ստեղծագործական բեղունությանը:

Բացի Գ. Սուլինից, այդ շրջանում Շահինի գործունեությունը ընդգծող բազմաթիվ ուրիշ հեղինակներ ևս հրապարակ եկան. ինչպես ֆրանսիացի պատմաբան և փորագրական արվեստի քննադատ Հանրի Բերալդին «Հանդես հին և նոր արվեստի» ժուռնալի 1905 թ. ապրիլի 10-ի համարում իր լույս ընծայած հոդվածով, և Գյուստավ Քան «Արվեստն ու արվեստագետները» հանդեսի 1913 թ. հունվարի համարում հրատարակված ընդարձակ հոդվածով:

Ավելորդ չէր լինի այստեղ զեթ մի քանի տող մեջբերում անել Գ. Քանի հոդվածից, որը լիովին ծանոթ է եղել Շահինի արվեստին, քայլ առ քայլ հետևած լինելով նրա գործունեությանը:

Հոդվածի տեքստը զարգարված է տաղանդավոր փորագրիչի 18 գործերով (14 օֆորտ և 4 գծանկար): Քանը այնտեղ ասում է.

«Շահինի արվեստը հուժկու է և միանգամայն ժուժկալ, հուզիչ և գունագեղ: Օֆորտի արվեստը նրա միջոցով պահպանվեց և ավելի զարգացավ:... Նա մեկն է նրանցից, որոնց մոտ սև երանգները ամենից ավելի խոր են, ճերմակները ամենից ավելի այլազան, ամենից ավելի երանգավորված, ամենից տաք: Զորեղագույններից մինն է նրանցից՝ որոնք հաջողում են գույնի տպավորությունը տալ գծանկարի ուժով, պարզապես ճերմակ ու սևի խաղերով:... Նա կատարելագործեց շոր ասեղի արվեստը...»:

Շահինի ստեղծագործությունների ժամանակագրական ուսումնասիրությունը մեզ ցույց է տալիս, որ այդ սկզբնական 10 տարիների ընթացքում, նրա գործունեության թափը՝ ինչպես արդեն նշեցինք՝ արտասովոր կերպով մեծ է եղել: Ծիշտ է, որ արտագրելու արագ տեմպը՝ սովորաբար վնաս է հասցնում աշխատանքի կարելի նկատել նմանօրինակ թերություն: Արդարև, իր կատարելական մեծ վարպետությունը ամենից ավելի բնորոշող երկերը, նրա ամենից ավելի խորապես զգացած ու արտահայտած թեմաները, մի խոսքով իր գլուխգործոցները, պատկանում են այդ շրջանին, որը համընկնում է դարասկզբից մինչև համաշխարհային պատերազմի առաջին տարիները:

Շահինն, իր նախընտրած ասպարեզում, օֆորտի ճյուղում հասած էր լրիվ զարգացման, ընդհանուր բարձր գնահատության ու փառքի գագաթնակետին:

Նա մինչև կյանքի վերջն աշխատեց և վարպետի ձեռքով արտագրեց իր համբավյին արժանի բարձրորակ գործեր. սակայն նրանք բնավ չգերազանցեցին սկզբնական տարիների գլուխգործոցները: Երիտասարդական բոցավառ տրամադրությունները և աշխատանքի սանձազերծ թափը չկային այլևս: Նրա գործունեության աստիճանական թուլացումը կարելի է բացատրել, նախ ինչպես պատճառներով, ինչպես՝ տարիների հետզհետե ճնշիչ և պարտասող կուտակումը, ապա և համաշխարհային մեծ աղետների պարտասող կուտակումը, որպիսին եղան 1914—1918 և 1939—1945 թթ. կործանարար պատերազմները: Այս բոլորի վրա պետք է ավելացնել ընտանեկան կյանքի անգործության խախտումը, որն

անկախաբար իր կամքից հետզհետե շեշտվեց և ի վերջո բայրայեց իր կենսունակությունը:

Բացի վերոհիշյալ պատճառներից, կար նաև այն, որ 20-րդ դարի սկզբներին երբ Շահինի տաղանդը իր բողբոջման ամենափայլուն շրջանն էր ապրում, զեղարվեստի աշխարհում սկսեցին ծայր տալ ու հետզհետե ծավալվել արվեստի ֆորմալիստական բազմաաեսակ հոսանքները, որոնք ի վերջո իրենց արտադրություններով ողողեցին զեղարվեստական երկերի դնման ու վաճառման հրապարակները:

Գործունեության սկզբի տարիներին, Շահինը մասնակցում էր միայն պետության պաշտոնական հովանավորությունը վայելող «Աալոն»-ին, այսինքն «Յրանսիացի արվեստագետների ընկերության» տարեկան ցուցահանդեսներին, ուր առանց ժյուրիի իրենց գործերն ուղարկելու իրավունք ունեին միայն ֆրանսիական Գեղարվեստական ակադեմիայի անդամ-նկարիչները և ընկերության մեջ ընդունված իսկական անդամները: Այնտե՛ղ, կարելի է ասել, ընդհանրապես հանդես են գալիս մեծ մասամբ նոր դասական և ակադեմիական ուղղությունների ներկայացուցիչներն ու նրանց հետևորդները:

Հետագայում Շահինը հեռանալով այդ միջավայրից, սկսեց իր գործերը ցուցադրել «Գեղարվեստների Ազգային Ընկերության» տարեկան նկարահանդեսներին, որն ուներ ավելի առաջադիմական բնույթ: Այստեղ Շահինը իսկական անդամ ընդունվեց 1907 թ. և հետզհետե աջքառու դիրք գրավելով, ընտրվեց վարչության և ժյուրիի կազմի մեջ:

Փոքր ընդհատումներով (1914—1918 թթ. պատերազմի տարիներին) նա կանոնավորաբար մասնակցել է նույն ընկերության ցուցահանդեսներին մինչև 1933 թ., երբ վարչական ներքին անհամաձայնություններ պատճառ դարձան, որ ընկերության ուղղամիտ և անշահախնդիր անդամների մեկ մասը բաժանվի և ծնունդ տա մի նոր միության «Գեղարվեստների Ազգային Ընկերության անկախ խումբ» անունով: Շահինը միացավ նրանց, նոր միության մեջ ևս ընտրվելով վարչության և ժյուրիի անդամ: Այնուհետև մինչ ցմահ շարունակեց իր գործունեությունն այդ միջավայրում:

Բացի վերոհիշյալներից, Շահինը մասնակցեց նաև ֆրանսիական և միջազգային մի շարք տարբեր զեղարվեստական խմբակցությունների ցուցահանդեսներին, ինչպես «Լա Սիմեզ» նկարչական ընկերության, «Յրանսիական նկարիչ-փորագրիչների միության», վենետիկի երկամյա ցուցահանդեսներին և անգլիական համամասն ընկերություններին: Նա ակտիվորեն մասնակցել է նաև Փարիզի հայ արվեստագետների հավաքական ելույթներին կամ ցուցահանդեսներին: Հանդիսացել է գլխավոր հիմնադիրներից և ողևորողներից մեկը «Անի» հայ արվեստագետների խմբակցության, որը հիմնվեց 1926 թվականին¹:

Ներկա ուսումնասիրության ընթացքում մանրամասն պիտի անդրադառնանք Սովետական Միության մեջ Շահինի օֆորտներով սարքված ցուցահանդեսներին: Այստեղ պետք է սակայն հիշել, սովետական կարգերի հաստատումից առաջ, նրա քանիցս ունեցած վեստական կարգերի հաստատումից առաջ, նրա քանիցս ունեցած մասնակցությունը կովկասի հայ նկարիչների կազմակերպած ցուցահանդեսներին: Այսպես՝ Թիֆլիսի «Հայ արվեստագետների միության» առաջին նկարահանդեսում, որը տեղի ունեցավ 1917 թ. փետրվարին, Շահինն ուներ 3 փորագրություն: Նույն միության 2-րդ ցուցահանդեսին (1919 թ.) Շահինի փորագրություններից 2-րդ ցուցահանդեսին (1919 թ.) Շահինի փորագրություններից 2-րդ ցուցահանդեսին նմուշներ. իսկ 1921 թ. կազմակերպված նկարչային ևս մի քանի նմուշներ. իսկ 1921 թ. կազմակերպված նկարահանդեսը, որը նույն թվականի հունիսին հանդիսավոր կերպով բաժանեցին փոխադրվեց Երևան և այնտեղ ընդլայնվեց, հնարած Թիֆլիսից փոխադրվեց Երևան և այնտեղ ընդլայնվեց, հնարավորություն տվեց մեր մայրաքաղաքի արվեստասեր հասարակությունը ներկայացնել հայ վարպետ փորագրիչից 30 օֆորտներ, որոնք բացառիկ ուշադրության արժանացան և առանձնապես շատերն ք բացառիկ ուշադրության արժանացան և առանձնապես շատերն ք հազարգուցին մեր կերպարվեստագետների և ուսանողության շքաշանակները:

¹ Փարիզի հայ կերպարվեստագետների միջև կազմված նկարչական երկու միություններն էլ, այսինքն «Անի» խմբակցությունը (1926—1930 թթ.) և նրան հաջորդող «Հայ ազատ արվեստագետների միությունը» (1931 թ. սկիզբ առած, ուր սկսել էր ցուցադրել նաև Շահինը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո) թե՛ իրենց կազմությանը, և թե՛ գործունեության ծրագրով հետապնդել են առաջավոր ձգտումներ. նախընտրել են ռեալիստական արվեստի ուղղությունները և իրենց կարողության սահմաններում, աշխատել են օգտակար լինել մեր Սովետական Հայրենիքին:

III

ԱՐՎԵՍՏԻ ՏԵՆԵԻԿԱՆ

«Փորագրության առանձնահատկությունը, որպես գեղարվեստական ոճ, կայանում է նրա աեխնիկական կատարման մեջ» — ասում է իրավացիորեն ուսա արվեստի տեսաբան Պ. Ն. Կորնիլովը իր «Ռուսական գրավյուրան 16—19 դարերում» գրքի սկզբում¹։

Շահինի օֆորտները կարող են փայլուն օրինակ հանդիսանալ, որպես ապացույց, փորագրության արվեստի ընդհանուր բնութագրերը խտացնող այդ սկզբունքային բանաձևին։ Արդարև, հայ մեծ գրաֆիկի բազմակողմանիորեն հարուստ աեխնիկական արտասովոր ճգնությունը հաղթահարում է իր ընտրած այլազան թեմաների իրագործման համար խոչընդոտ հանգիսացող բոլոր գծվարությունները, լինեն նրանք կապված փարիզյան ժողովրդական կենցաղի բարդ գրվազների, հայտնի անձերի հոգեբանական ուրույն դիմանկարների կամ տարբեր վայրերից վերցրած պեյզաժների հետ։

¹ П. Е. Корнилов, Русская гравюра XVI—XIX вв., Госиздат «Искусство», 1950.

Շահինը իր ստեղծագործություններում միշտ սեպիտակական հողի վրա կանգնած, իր տպավորություններն իրենց անմիջական թարմությամբ բացահայտելու համար, օգտագործում է աեխնիկայի ամենաարագ ու նպատակահարմար եղանակները։ Նա խուսափելով հին դասական փորագրության խաչաձևած գծաշարերի (շարիխ) մեթոդից, որը պահանջում էր երկար համբերություն և ժամավաճառություն, և բոլորովին անհարիր էր իր երիտասարդական աշխույժ բնավորությանը ու տպավորությունների անմիջականության հասնելու ձգտումին, նախընտրում է չընդհատված, սահուն, ազատ խաղումներով ստացված զուգահեռ գծաշարերը, որոնք իրենց ճկուն ուղղություններով շոշափում են պատկերված նյութական տարրերի ծավալային ձևերը։ Այդ կերպ ձևեր բերված գծաշարերի առավել կամ նվազ ուժեղ փորագրվելը տալիս է պատկերի լուսավոր կամ ստվերոտ կողմերի փոխհարաբերությունները, որոնց հատկություններին նոր շեշտ տալու համար, վարպետը գիտե թրթվաջրի լայն ու պատշաճ քսուքներ կատարել փորագրված և ջնարակից մերկացված տախտակի վրա։ Նա ամեն միջոց գործ է ածում պատկերադրման հետապնդած դանազան նպատակներին հասնելու համար, սխաժ՝ առանձին կամ թթվաջրի (օֆորտ) հետ կիրառված շոր ասեղից, գրոցից, փափուկ կամ կարծր ջնարակից (լար) մինչև դունավորման համար կիրառված դանազան խոշորությամբ փոշիացած նյութերը, ինչպես գեղին ծծմբի մանրահարտիկները, փոշիացած հասարակ աղը և այլն։ Նմանապես, տարբեր նպատակների համար, օգնություն է կանչում շաքարը, օճառը, սոսինձը, թափանցիկ թուղթը (կալկ), որը գործածվում է գծանկարված պատճենները փորագրելի տախտակի վրա ստեղադրելու համար, և այլն։

Այս և ուրիշ բոլոր ինքնուրույն հնարքների կիրառման աեխնիկական նկարագրությունները, ունենալով զուտ մասնագիտական բնույթ, տեղ չեն կարող գտնել մեր ներկա ուսումնասիրության բնույթի, տեղ չեն կարող գտնել կերպով ասել, որ ջնարակի, շորմեջ, Կարելի է միայն անցողակի կերպով ասել, որ ջնարակի, շորմեջի և օֆորտի համատեղ գործածությունը, որին առավելապես անձնատուր էր լինում Շահինը ստեղծագործության սկզբի տարիներին, իր որոշ փորագրություններին տալիս է լինական մեղանի և

վրձինի միջոցով ձեռք բերված պատկերների տեսք. ինչպես օրինակ՝ «Գերասան Լեռան»-ի, «Անգործ բանվոր»-ի կամ «Տարևտիկ որմնադրի» նկարներում, որոնք փորագրված են 1903 թ., այսպես կոչված՝ «նկարչական օֆորտի»։ «Նկարչական օֆորտի» հիանալի օրինակ է հանդիսանում նույնպես՝ օրհորդ Լ. Բ.-ի փարիզյան վայելչագեղ, նուրբ և ձկուն կերպարը, իրականացված՝ դարձյալ վաղ շրջանում՝ 1904 թվականին։ (Տե՛ս նկար 32)։

Սկզբի տարիներին, Շահինի գեպի այդ տեխնիկան ցույց տված նախասիրությունը բացատրվում է պարզապես նրանով, որ նա իր ստեղծագործական կյանքն սկսած լինելով գունանկարչությունում ուշագրավ ձևափոխություն ձեռք էր բերել այդ բնագավառում, ուստի և դժվարանում էր հրաժարվել երանդային տպավորությունների թովչությունից, թեկուզ սև ու սպիտակի միջոցով ստացված։

Իսկ շոր ասեղի ընդհանրական դործածությունը, որին Շահինը հետզհետե համարյա թե բոլորովին անձնատուր եղավ, իր փորագրություններին հաղորդում է լույս և ստվերի թեթևություն, շրջագծերի թավշային փափկություն և միևնույն ժամանակ հեռանկարչական անջրպետների թափանցկություն. ինչպես օրինակ մենք տեսնում ենք նրա կատարած մի շարք պեյզաժներում, գլխավորապես վենետիկյան տեսարաններում, և՛ առավելապես կանացի բազմաթիվ պորտրետներում, որպիսիներ են՝ «Բարձով կինը» (1900 թ.), «Լիլի Արեճա» (1903 թ.), կամ թե «Ժեմեն»-ների (1911 թ.) և «Կեմմա»-ների (1903—1907 թթ.) շարքերը։

Չոր ասեղով կատարած Շահինի կահույցի գեմքեր ներկայացնող փորագրությունների ոճը դիտելով, մի քանի արվեստագետներ, նմանություն՝ եթե ոչ խնամություն՝ կապեր ուղեցել են տեսնել նույնպես կանացի կերպարներ նկարող, ֆրանսիացի օֆորտիստ Պոլ Էլյոյի շոր ասեղ փորագրությունների հետ։ Սակայն սույն հարցն իր բոլոր կողմերով դիտելուց հետո, պարզվում է, որ այդ նմանությունը մասնակի ու ձևական բնույթ միայն ունի։ Շահինի ընտրած կանացի թեմաները կամ գեմքերը հիմնականում տարբերվում են Էլյոյի նկարածներին։ Վերջինս իր տիպարները վերցնում էր ընդհանրապես Փարիզի բուրժուա-արիստոկրատական դասա-

կարգի պճնազարդ օրիորդներից ու կանանցից, և կամ, անդլիական աղնվականության պատկանող նրբատեսիլ լեյդիներից, տալով նրանց նիստ ու կացի արհեստակցալ ջղաձգական արտահայտությունները. մինչդեռ Շահինի օֆորտներում կանացի գեմքերն ու կերպարները մեզ ներկայանում են մարդկային նորմալ, շայտասերված, բնական արտահայտություններով։ Շահինը նրանց ընտրում է մանր բուրժուական, ավելի շուտ աշխատավորական խավերից, որոնք ճիշտ է շնորհալի կերպով են հագնվում ու դրավիչ են, բայց դա արդեն փարիզուհու աշխարհածանոթ բնածին ճաշակից է գալիս և ոչ թե դասակարգային առանձնաշնորհումներից։

Այն իրողությունն ըստ որում Շահինը իր աշխատելակերպում տեղ-տեղ կիրառել է ձկուն, երկար գծեր, որոնք աշխույժ թուխքներով սահում են փորագրատախտակի ազատ մակերեսում, ինչպես Էլյոյի մոտ, համոզիչ չէ և մեզ թույլ չի տալիս վստահորեն փոխառություն մեղադրանքով որակելու այդ կիրառությունը, մասնավորապես դիտենք, որ նմանօրինակ աշխատելակերպ գոյություն է ունեցել նաև Էլյոյից առաջ։

Համենայն դեպս, առանց բացարձակորեն ժխտելու, որ Շահինը այս ձևական հարցի մեջ կարող է և որոշ չափով ներշնչված լինել Էլյոյից¹, որը 15 տարով իրենից ավելի մեծ լինելով, արդեն հայանի էր Փարիզում իր ստեղծագործություններով, մենք ավելի լուրջ հիմքեր ունենք ընդունելու համար, որ Շահինը, տեխնիկայի տեսակետից, ավելի շուտ օգտվել է հին վարպետների փորագրական հարուստ փորձերից։ Ինչպես օրինակ Ժան-Բատիստ Տիեպոլոյից (1696—1770 թթ.), որի օֆորտներից ընդօրինակություններ է արել որպես դժանկարչական վարժություն, Վենետիկի ուսանողական շրջանում, նմանապես օֆորտի աշխարհահռչակ վարպետ Ռեմբրանդտից (1606—1669 թթ.), որի հանրածանոթ լույս-ստվերների առանձնահատուկ հմայքին ընտելանալով արձագանքել է նրան իր բազմաթիվ փորագրություններով, ռեմբրանդտյան ոճի նշով կենսավորելով նրանց։ Դարձյալ անհավանական չէ, որ Շահինը ազդված լինի, ավելի մոտ ժամանակաշրջանում ապրած հինը ազդված լինի, ավելի մոտ ժամանակաշրջանում ապրած

¹ Paul—Cesar Hellen—ճնվել է 1859 թ.

ժ. Մ. Ուխտալերի «Վենետիկյան տեսարանները» շարքից, որոնց միջնորոտային լուսավոր ու թափանցիկ ըմբռնումներին շատ մոտ են կանգնում մեր վարպետի ստորագրած «Վենետիկ»-ները, առանց սակայն հետեւելու անգլիացի հանրահռչակ նկարիչ — ակվաֆորտիստի մանրամասնող տեխնիկային:

Շահինն աշխատել է, ինչպես աշխատում է մեղուն, երբ ծաղկից ծաղիկ թռչելիս նեկտարի կայլակներ է հավաքում և նրանցից պտորաստում մի այլ բան՝ մեղրը: Այդպես էլ Շահինը, զիտելով զանազան հայտնի վարպետների գլուխգործոցները և տեսողարար ուսումնասիրելով նրանց աշխատելակերպը, կազմավորել է ու զարգացրել իր ուրույն տեխնիկան, ինքնահատուկ ոճը:

Շատ ճիշտ է ասել ժամանակին, ֆրանսիացի գրող և հայտնի արվեստաբան Գ. Բանը, Շահինի օֆորտների ուսումնասիրությանը նվիրված և մեր արդեն հիշած ընդարձակ հոդվածի վերջում (տե՛ս ներկա տեքստի էջ 26-ը). «Անիմաստ է Շահինին մյուս խոշոր փորագրիչների կարգը դասելու համար հարց տալ, թե՛ նա որքա՛ն է մոտ կանգնած կամ հեռու մի լրպերից կամ մի կուի լքկրանից¹: Իր մեծ ինքնատիպությամբ, որն առավելապես արտահայտվում է իր ոճի մեջ, նա դասվում է ստեղծագործող այն արվեստագետների շարքին, որոնք բացարձակ տերն են իրենց արվեստին և իրենց գործերը զիտողների մոտ առաջացնում են պլաստիկ հուզականության միջոցով իդեալական հուզմունքը»:

Տեխնիկայի մասին նրա մանրակրկիտ բժախնդրությունը կանգ չէր առնում սակայն պղնձե տախտակի վրա կատարված գործողությունների լրացումով. կար նաև տպագրության հարցը և նրա հարակից մեխանի թանձրության աստիճանավորման և գույնի խընդիրները. իսկ տպագրությունից հետո պատկերը շրջանակելու մտահոգությունները և այլն: Այս լրացուցիչ հոգածությունը գործի նկատմամբ միշտ մի լավ արդյունք էր ավելացնում նկարի ընդհանուր արտահայտության վրա: Շահինը երբեք տեխնիկայի

¹ Լուի-Օգյուստ Լրպեր (L. O. Lepère 1849—1918 թթ.) և Լուի Լքկրան (Louis Legrand ծն. 1863 թ.) օֆորտի ֆրանսիացի խոշոր վարպետներ են, որոնք այդ թվականներին (1912 թ.) շարունակում էին իրենց ստեղծագործական կյանքը Փարիզում:

մանվածապատ բարդությունների մեջ չէր մտնում ինքնանպատակ հարտարություն ցուցաբերելու համար, այլ հետապնդում էր միայն երկի վերջնական տպավորությունը բարելավելու հարցին:

Փորագրված տախտակը հրատարակչին հանձնելուց առաջ փորձի էր ենթարկվում, արդյունքի մասին վերջնական գաղափար կազմելու համար: Այդ փորձը մասնագետ մարդիկ կոչում են «արվեստագետի փորձ» (épreuve d'artiste), որն իր ուրույն արժեքն ունի և թանկ է գնահատվում վաճառքի նյութի դառնալու դեպքում:

Փորձահանման համար, մասնավոր, ընտիր թուղթ ճարելու խնդիրը նույնպես զբաղեցնում էր նրան: Այդ հարցը ևս լուծելու մտքով գնում էր հաճախ պրպտումներ կատարելու հին գրքեր վաճառողների խանութներում, ձեռք էր բերում վաղնջական ընտիր հրատարակություններից մնացած անաղարտ թղթի էջեր, և նրանց օգտագործում:

Մերթ ընդ մերթ փորձեր էր անում նաև գունավոր օֆորտ ստանալու համար, որոնք սակայն իր գործերի ամբողջության մեջ հազվագյուտ բացառություններ են կազմում: Ստվար մեծամասնությամբ, Շահինի փորագրությունները կատարված են սևով, կամ թե, սրճագույն և տաք շագանակագույն երանգներով:

IV

ԹԵՄԱՆԵՐԻ ՀՈՒՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նկատի առնելով գործերի սոցիալական բովանդակության ընդհանուր նկարագիրը, նրանց ամենից ավելի լիարվեստ ու խոր հուզականությամբ ընտիր նմուշները, Շահինը հանդիսանում է որպես մարդկային թշվառության ամենից ավելի հարազատ և հազվագյուտ արտահայտիչներից մեկը:

Նրա տիպարները վերցված են կապիտալիստական աշխարհի խոշորագույն, ամենահատկանշական կենտրոններից մեկի՝ Փարիզի անհունապես այլազան միջավայրից:

Այստեղ հասարակ մարդկանց թշվառությունը բազմակողմանի է և չի սուր հակադրություններով: Շահինը դրսից եկողի թարմ տեսունակությունով և շնորհիվ կյանքի մասին ունեցած ռեալիստական խոր հասկացողությանը, դիտելու և նկարագրելու հազվագյուտ կարողություններին, նկարելու անսպառ նյութ է գտել մանավանդ իր գործունեության սկզբնական տարիներին:

Շահինի ստեղծագործական ծավալուն և բազմակողմանի արտագրությունն ուսումնասիրելու համար, կարելի է, ըստ թեմաների

բովանդակության, բաժանել այն որոշ հատվածներով: Իհարկե, ո՛չ ժամանակագրական, ո՛չ էլ արտադրական քանակի տեսակետից այդ բաժանմունքները չեն կարող բացարձակապես ճիշտ նկատվել: Բայց և այնպես, ընդունված հարաբերական դասավորումը կարող է մեծապես օգնել առաջադրված երկերի ուսումնասիրությանը, և միևնույն ժամանակ հեշտացնել նրանց ծանոթացումը ընթերցողների համար:

Այս մեկնաբանությամբ, մենք հաջորդաբար սլիտի ուսումնասիրենք Շահինի գործերը, հետևյալ գլխավոր թեմաների ուղղությամբ:

1. Փարիզի ընչազուրկ և անգործ թշվառները.
2. Աշխատավորներ.
3. Ժողովրդական հանգեսներ, տոնավաճառներ և հարակից թեմաներ.
4. Պեյզաժներ.
5. Գրքերի պատկերազարդումներ.
6. Պորտրետներ.
7. Շահինի գունանկար երկերը:

1. ՓԱՐԻԶԻ ԸՆՉԱԶՈՒՐԿ ԵՎ ԱՆԳՈՐԾ ԹՇՎԱՌՆԵՐԸ

Նախ լուսնային-պրոլետարիատն է նրա ուշադրության առարկան, ծայրահեղ շփավորները, որոնք բոլորովին զուրկ են բնականից և ապրուստի որևէ կանոնավոր միջոցից: Նրանք գրոշաբեհեր են, ինչպես կոչում է նրանց Փարիզի հասարակ ժողովուրդը, յուրահատուկ բարբառով:

Շահինը ճեպանկարելու, ուսումնասիրելու համար գնում և նրանց գտնում է մերթ աղքատ թաղերի կամ արվարձանների մռայլ անկյուններում գեգերելիս, մերթ էլ Սենայի ափերին, կամուրջների մթին, խոնավ ու գարշահոտ կամարների տակ, ուր նրանք պատրամի են, խոնավ են վատ եղանակին: Գիշերներն այնտեղ են քնում, պարվում են վատ եղանակին: Գիշերներն այնտեղ մի ծրարի վրա, որը գլուխները գրած ցնցոտիներ պարունակող մի ծրարի վրա, որը կազմում է իրենց միակ ինչքը: Այսպիսիների կյանքն են պատկերում «Քնածներ կամուրջի տակ» (1900 թ.) և «Քնածներ նստարում վրա» (1901 թ.) օֆորտները: Այս վերջինի մեջ ընչազուրկ-

ներն օգտվելով ամուսն գեղեցիկ եղանակից, գրավել են գիշերվա ուշ ժամին ամայացած բուլվարների կամ հանրային պարտեզների թափուր մնացած նստարանները, որոնց վրա երկարած պիտի մրափեն, եթե գիշերապահ օստիկանները չզան մի բուսից մյուսը նրանց խանգարելու:

Այա՛ Շահինը ուսումնասիրում է նաև այլ կարգի շրավորների կյանքը, որոնք ապրելու ուրիշ միջոց չունեն, եթե ոչ դիմել հանրության ողորմությանը, այսինքն մուրացկանության:

Այս շարքին պատկանող աշխատություններից բացառիկ հուզականությամբ է ներկայացված նրա «Մուրացկան ձեր կիներ» (1900): Այդ փորագրության համար ընտրած լինելով ըստ երևույթին մի շատ կրկնված հասարակ թեմա, Շահինին հաջողվում է՝ առանց ռոմանտիկական որևէ ձգտումի՝ մեզ տալ բարձր արվեստով և իդեական վեհ շնչով իրականացված մի առաջնակարգ ռեալիստական գործ: (Տես նկար 3):

Եկեղեցու դռանը կանգնած, հետին կարիքի մեջ ընկած այդ կինը, անցորդների գույքը շարժելու համար չի դիմում որևէ արհեստական միջոցի, ինչպես այդ անում է քիչ հեռու մուտքի առաջ կանգնող անթացուպերին կռթնած և իր հաշմանդամ ոտքը մերկացրած պատանին: Իր բնական կեցվածքով, Շահինի նկարած մուրացիկի տիպարը, խոր ծերության դուռը հասած մի դժբախտ կին է, ներկայացված իր իսկական հոգեբանական կացության մեջ: Նրա վիճակի ճիշտ պատկերացումը նույն ժամանակ խտացնում է ապրած ամբողջ անցյալը: Նա շատ հավանաբար եղել է ընտանիքի մայր, համենայն դեպս տվյալներ է որպես աշխատասեր, շարժառնասուհի: Այդ ցույց են տալիս երկարատև գործածությամբ կարճացած թեզանիքներից դուրս ընկնող նրա նիհար, ջղուտ ձեռները, որոնցից ձախը, պրկված մատներով, հենվում է կեռազուլիս գավազանին, ուսերին գցած բրդե կարճ թիկնոցը, դիտին կապած թաշկինակն ու լաշակը:

Շահինի այդ մուրացկանուհին ցուցադրելով իր կարոտ վիճակը, կարողանում է անաղարտ պահել իր արժանապատվությունը. նա չի աղերսում, ձեռք չի կարկառում անցորդներին, այլ իր փոքրացած լուսաքամ աչքերն ուղղում է նրանց, համարյա թե մայրա-

կան գորովալի զգացումով. հոգ չէ թե այդ ունեոր անցորդներից շատերն անտարբեր անցնեն ու դնան: Շահինը իր այդ տիպարի դեմքին տալիս է կարիքավոր իսկական մուրացիկի ընդհանրական գաղափարը, միևնույն ժամանակ դատապարտելով դասակարգային այն սխտեմը, որը ծնունդ է տվել նման կացության:

Այդ նկարն ունի գլուխ գործոց համարվելու բոլոր հատկությունները. զգացման խտացում, արտահայտչական մաքսիմում ուժ, տեխնիկայի ամենաժուժկալ, սակայն նպատակասլաց կիրառում: Այնտեղ ցուցաբերվում է չոր ասեղի գերազանց վարպետություն:

Շահինը խորազնին ուշադրության նյութ է դարձնում նաև սովածներին, որոնց խմբերը բաղկացած են ծերերից, հաշմանդամներից, և կամ ընտանեկան և աշխատանքային պայմաններից դուրի բանվորներից, որոնք անլուծելի խոհերի անձնատուր, տխրաբեկ, հերթի են կանգնում մի շերտի ապուրի համար: Շատ տիպար կան են սույն թեմայով կատարած հայտնի աշխատություններից «Ապուրի բաշխումը ուրբաթ օրերը» (1900 թ.) և «Շատո Ռուժում» (1900 թ.) փորագրությունները: «Շատո Ռուժ»-ը մի թաղամասի անուն է, ուր պետական միջոցներով կազմակերպվում էր այդ՝ այսպես ասած՝ «մարդասիրական օգնության» գործը:

Ուշադիր դիտողի վրա անջնջելի է այս պատկերի թողած թախծալի խոր տպավորությունը: Տեսարանի հեռավոր մասում, կես անորոշության մեջ նշմարվում է միջին կամ երիտասարդական տարիքի մարդկանց մի շարժվող բաղմունք: Ումանք ոտի վրա հերթի են սպասում, իսկ ուրիշներն արդեն նստած ստացել են իրենց ապուրի բաժինը: Սրանք աղմկարար, անհամբեր տարիքի աղքատներն են. հարկ է առաջին հերթին նրանց բավարարել ու աղքատներն են. հարկ է առաջին հերթին նրանց բավասել...: Այս վերջիններից Շահինը մեզ ցույց է տալիս երեք տիպարներ, գետեղված միջին պլանում, երկու ծեր կանայք և նրանց միջև մի տարեց մարդ: Նրանք տեղավորված են լայնատարած մի դատարկ սեղանի առաջ, որի վրա միայն կողքի կնոջ առջև է դրված ապուրի մի պնակ և գդալ: (Տես նկար 4):

Եթե ուշի-ուշով դիտենք այս երեք աղքատներից դեպի խորը նստած կնոջ դեմքը, մենք իսկույն պիտի ճանաչենք նրան: Նա քիչ

առաջ եկեղեցու դռանը կանգնած մուրացիկ կինն է, հալ ու մաշ, փոսացած աչքերով, տխրատեսիլ բայց միևնույն բարեմույն դեմքով: Անշուշտ ողորմության համար իրեն տրված մի քանի «սուներբ» (կոպեկները) բավարար չլինելով ապահովելու օրապահիկը, նա եկել է այստեղ, և մի քիչ սնունդ ստանալու հույսով սպասում է անտրտունջ:

Շահինն առանձնապես բազմաթիվ ճեպանկարների նյութ է դարձրել այդ տիպարի ուսումնասիրությունը և օգտագործել է այս առթիվ:

Երկու կանանց միջև նստած գլխարաց, անխնամ մազերով մարդը, սովածությունից ուժասպառ ու երկար սպասումից ջլատված, ցած է գցել գլուխը սեղանին խաշաձև ծալած արմունկների վրա, խոկո՛ւմ է, թե՛ մրափում, հայտնի չէ: Սակայն բացահայտ է, որ նրա հոգնաբեկ երևույթը խորը կարեկցություն է ներշնչում դիտողին:

Գալով մյուս կնոջը, Շահինը վերցնում է նրան որպես թեմայի բնորոշող և գլխավոր դեմք, ցույց է տալիս նրա կերպարը առանձնապես կենդանի, ուժեղ լույսի տակ: Մազերն ամբողջովին սպիտակած մի կին, որ գլխին ունի սև կերպասից պատրաստված կարգին մի գլխարկ: Հագել է դարասկզբի կանանց նորաձևության համաձայն մի բլուզ, որի թևերի վերևի մասերը փրուտույց էին լինում: Այդ արտաքին երևույթն ապացուցում է, որոշ չափով, նրանցյալ կյանքի բարեկեցիկ պայմանները: Երիտասարդ տարիներին նա աշխատել է ոգևորված ապագայի գեղեցիկ հույսերով, և եթե ունեցել է հաջողություններ, այսօր նրանք այլևս գոյություն չունեն. նա ընկճվել է կապիտալիստական կարգերի ծանր ու քմալքված կամ որբեայրի: Ոգևորիչ հույսի որևէ նշույլ չի մնացել նրանջնջելի խորշումներով ակոսված դեմքի վրա, որն արտահայտում է հոգեկան դառնության և ֆիզիկական հոգնածության խոր զգացումը:

Օֆորտների շարադրանքների մեջ Շահինը միշտ խուսափել է ավելորդ պաճուճանքի մտքով կատարված մանրամասնություններից,

մանավանդ երբ նրանք գաղափարապես չեն կապվում թեմայի հետապնդած մտքերին:

Մեր ուսումնասիրած «Շատո Ռուժ» նկարի մեջ, որպես մանրամասնություն հենց առաջին պլանի վրա խոշոր տեղ է գրավում մի հին խարխուլված սակառ: Ճիշտ է, որ նա այստեղ չի խանգարում նկարի ձևական կառուցման ընդհանուր ներդաշնակությունը, բայց և այնպես աչքի ընկնող ծավալայնությամբ կարող է դիտողի բայց և այնպես աչքի ընկնող ծավալայնությամբ կարող է դիտողի ուշադրությունը խոտորել ու այդ կերպով արդելք հանդիսանալ թեուշադրությունը խոտորել ու այդ կերպով արդելք հանդիսանալ թեմայի ուղղակի և լրիվ ընկալմանը: Բայց իրականում այդպես չէ: Նա ոչ միայն այստեղ չի խանգարում նկարի իղեհական բացահայտմանը, այլև հարստացնում է այն և օգնում նրա ամբողջական ըմբռնմանը:

Մենդի փոխադրության համար սահմանված այդ սակառը, անշուշտ պատկանում է ապուրի բաշխմանն սպասող աղքատներից մեկին, որին նա ծառայել է երկար տարիներ, երբ տեղը նյութապես ի վիճակի էր հոգալու ընտանիքի համեստ պարենավորումը: Իսկ այսօր ևս նա պիտի ծառայի աղքատացած և ավուր հացի կաթոս խեղճ տիրոջը, ապուրի բաշխումից հետո մի հավելյալ բաժին հետը տուն տանելու, ուր անկողին ընկած կամ ծերության պատհասելու անկար մնացած ընտանիքի մի անդամը սոված սպասում է «ապուրի ժողովրդական բաշխումից» իր համեստ բաժինն ստանալու համար:

Այսպիսի ռեալիստական նրբին նկատումներով հարուստ են Շահինի բոլոր ստեղծագործությունները:

Փարիզի փողոցներով շտապող, եռ ու զեռ բազմության միջից Շահինի անվրեպ սուր տեսողությունը հեշտությամբ է զանազանում թշվառության այս կամ այն դասին պատկանող տիպարները: Ահա՛ գործազրկության մշտական մղձավանջից հալածված «Անգործը» (1903 թ.), իր շատ հայտնի փորագիր գլուխգործոցներից միինը: (Տես նկար 5): Այստեղ ներկայացված է տարիքավոր մի մարդ, որը բանվորական կասկետը գլխին, ցրտից պաշտպանվելու համար վիզը թաշկինակով փաթաթված, լղար, ոսկրոտ մարմինը կաղապարող հնամաշ շորերով, փողոց է դուրս եկել: Իրանը դեպի առաջ թեքած, նա գնում է շտապ քայլերով, հայացքը

սենեած պարապույթյան մեջ, անորոշ հուշերի ուղղութիւնով: Իրա-
կանութիւնն իր ստեղծման մի մարդկային ցավատանջ կերպար է սա,
որի գրաֆիկական պատկերացումը տեխնիկայի տեսակետից մի
սքանչելիք է, կատարված փափուկ լաքի և շոր ասեղի համախառն
կիրառութեամբ, թիվի լայն խածոտումներով:

Ահա՛ և նրա ընկերը, պատկերված ոչ նվազ նշանավոր մի այլ
օֆորտի մեջ, «Տարետիկ ձեր ումնադիրը» որն իր ֆիզիկական
ակներև քայքայման հետևանքով այլևս ի վիճակի չէ կանոնավոր-
րապես ծանր աշխատանքի լծվելու, ուստի նա ևս իր աչքերը սար-
սափով սենեում է դեպի անհույս ապագան: (Տես նկար 6): Ծա-
հինն իրական տիպարից դիտած լինելով այդ ջլախտավորի շար-
ժումները, աննկարագրելի կարեկցութեամբ է պատկերել այն, ի
սպաս դնելով իր արվեստի բոլոր վարպետ միջոցները, որոնց
շնորհիվ այսօր մենք ևս խորապես համակվում ենք նույն սրտա-
շարժ զգացումներով:

Գլխավորաբար սկզբի տասնամյա շրջանին, Ծահինի ստեղ-
ծագործութիւններում նշանակալի առող է գրավում նաև մի ուրիշ
խավ փողոցային թափառաշրջիկների, որոնք, ըստ երևույթին,
սովածներ չեն, ցնցոտիներ չունեն իրենց թիկունքում, հոգնութեան
և վշտի խորշումներ ևս չեն կրում իրենց դեմքերի վրա, իսկ եղած-
ներն էլ աշխատում են ծածկել շպարի տակ: Այդ դժբախտները
փողոցի գեղեցկուհիներ՝ շատ հաճախ նյութական վատթար պայ-
մաններում ապրող բանվորական ընտանիքներից դուրս եկած աղ-
ջիկներ են, կապիտալիստական ուժիմի տակ հուսալքված զոհեր,
որոնք, կենցաղային բիւրտ պայմաններից մղված, գնացել են բուր-
ժուական լպիրշ կամայականութեան գիրկը, իրենց գեղեցկութունը
վաճառելու և զվարճացնելու համար կապիտալիզմի դատարկա-
պորտ «շքեղ» մականւթներին:

Այստեղ Ծահինը գեռ երիտասարդ հասակում փոխադրվում է
բարբերի ուսումնասիրութեան մի վտանգավոր միջավայր, ուր սա-
կայն կարողանում է պահել իր արվեստի առանձնահատուկ լրջու-
թիւնը, ինչպէս կենցաղային նկարագրութեան այլ բնագավառ-
ներում:

Ծահինը շգնաց բնավ փարիզյան մի շարք նկարիչների ստեղ-

ծած հոսանքով, որոնք հետևելով օրինակի համար՝ Տուլուզ-Լոտ-
րեկի գծած ուղուն վերցնում ուսումնասիրում էին կնոջը իր բարո-
յական անկման ծայրահեղ վիճակներում:

Իր մի շարք երկերի մեջ, ինչպիսիք են՝ «Կնոջ նեցուկ—շահա-
գործողն ու նրա հումանումին» (1898 թ.), ուր կինը գտնվում է հա-
սարակութեան ամենաստոր կերպով շահագործվողի դրութեան մեջ,
«Գիշերային պտույտ» (1903 թ.), «Մայրի շրջիկումները» (1903 թ.),
«Կեղեցիկ Ռիտան» (1902 թ.), «Միտինետ» (1904 թ.)¹, (Տես նկ. 7),
«Փարիզումներ» (1910 թ.), «Արլետ», մի կենսախայտ արթնամիտ
և սիրուն աղջկա «Կեմմա»-ից (1903, 1905, 1907, 1910 թթ.) քա-
ղած բազմաթիվ փորագրված էտյուդներում, Ծահինը ուսումնասի-
րել է բարբերի բուրժուական այլասերման այդ զոհերի կանացի
գեղեցիկ կերպարները, և ցայտուն ռեալիստական մեծ արվեստով
գեղեցիկ կերպարները, և ցայտուն ռեալիստական մեծ արվեստով
կան դրավճութեան, կանացի ձեքձեքումների և փարիզուհուն հատուկ
հանրածանոթ վայելչասիրութեան ու ճաշակի բոլոր նրբութիւննե-
րով: (Տես նկարներ 8 և 9):

2. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ

Գրաֆիկական երկերի վերոհիշյալ շարքերը մեզ նկարագրում
են առանձնապէս Փարիզի գործազուրկ դասի կենցաղային հատ-
կանշական կողմերը: Ծահինը ունի նաև որակով ու քանակով
կանչական կողմերը: Ծահինը ունի նաև որակով ու քանակով
նույնքան ընտիր գործեր, որոնց միջոցով մեզ ցույց է տալիս հրս-
կա մայրաքաղաքի հասարակութեան աշխատավոր համեստ տար-
բերին:

Նրանց մեջ մենք տեսնում ենք հազար ու մեկ հասարակ, բայց

¹ Ժողովուրդը այս անունով է կոչում Փարիզի կանացի նորաձևութեան ար-
բունաբերութեամբ զբաղվող մեծ տներում, որպէս աշակերտ, համարյա թե ձրի
կերպով աշխատող և ծառայող, սկսնակ աղջիկներին, նրանք ցերեկվա ընդմիջման
պահին չեն վերադառնում տուն ճաշելու համար, այլ հաճախ փոքրիկ խմբերով
գնում են հասարակաց պարտեզները, թյուլերի, Ծանդելիզե, ուր նստարանների
վրա բաց են անում իրենց ազբատիկ ճաշի ծրարը (պանիր, հաց, պտուղ) և
զվարթ, շաղակրատելով ուտում: Այդտեղից էլ ծագել է նրանց արված անունը,
(midi — կեսօր, և dinette — ճաշիկ):

Նույն պահերից օգտվելով է, որ շատ անգամ բուրժուազիայի դատարկա-
պորտ կնամուշները մոտենում են և փորձում իրենց ձանկը գցել նրանց:

գրի խոր ճանաչողությամբ է նկարում նրբին, վայելչաձև ու կայտառ նժույզներին, որոնք՝ գեղեցկուհիների հետ, ծառագարդ պողոտաների վրայով, ծաղկուն պուրակների կողքով պտույտի գնացող բուրժուանների թեթևալաց կառքերին են լծված: (Տես նկար 18):

Շահինի ձիերի այդ կայտառ շարժումներին և արագ սլացքի հետ մրցող ուրիշ ձիեր մենք կարող ենք գտնել միայն 19-րդ դարի ֆրանսիական գրաֆիկայի խոշոր դեմքերից Կոստանտեն Գիզի (1805—1892 թթ.) մատիտանկարներում, որոնք համաշխարհային համբավ ունեն:

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՆԵՐ, ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԹԵՄԱՆԵՐ

Յարդ մեր հիշած թեմաների մեջ ժողովրդական տիպարները ներկայացված են ընդհանրապես անհատական ձևով և կամ մի քանի հոգուց բաղկացած փոքր խմբակներով: Շահինը ունի սակայն մի շարք մեծածավալ և առաջնակարգ որակի փորագրություններ, որոնց մեջ ցույց է տրված սոցիալական տիրող պայմաններից տառապող հասարակ մարդկանց բազմություններ, իրենց հաճույքի վաղանցուկ բուրժուաններին: Մի տեղ մենք տեսնում ենք նրանց ազգային տոնի առթիվ, հրապարակների վրա ոգևորված պարելիս. մի այլ տեղ նրանք խոնավել են բանուկ բուլվարների վրա սարքած տոնավաճառներում, էլեկտրական լույսերով ողողված շողշողուն կրպակների առաջ: Այնտեղ երիտասարդների զվարթ բացազանչություններով ոգևորված մթնոլորտում, մեխանիկական նվագարանների շնորհալից երաժշտության աղմուկի մեջ, նրանք ունկնդրում են խայտաբղետ շորեր հագած միմոսներին, որոնք օրն ի բուն, հանդիսականներից սանձազերծ քրքիջներ խլող փարիզյան սրամտություններ են շռայլում: Նրանք հետևում են նաև աճարարներին, որոնք հազար անգամ կրկնված բայց և այնպես անցորդ միամիտ բազմության համար միշտ նորություն թվացող հնարքներ և խաղեր են ցույց տալիս. և կամ դիտում են ըմբշամարտիկների և կրկեսի մարդկանց մկանային ուժի և ձկունության փորձերը:

Այս կարգի գործերից առավելապես աչքի են ընկնում «Պարահանդես Բառուղիում» (1907 թ.), «Փոքր տոնավաճառը» (1904 թ.), «Կապիկների ցուցաբերումը» (1906 թ.), «Գուշակուհիներ» (1907 թ.), «Բեմասաց հուպիտը» (1904 թ.), «Լարապարունիկ» (1904 թ.): Էմբշամարտական տեսարաններից՝ «Գլուխները գետնում» (1904 թ.), «Կոտեմարտը» (1904 թ.), «Մարգանթ ծանրություններով» (1904 թ.) փորագրությունները:

Այդ բոլոր օֆորտները ցույց են տալիս Շահինի՝ որպես նըրբատես դիտողի և ճիշտ վերլուծող հոգեբանի գերազանց կարողությունները և միևնույն ժամանակ նրա շարադրելու կատարյալ վարպետությունը: Այս հատկություններն ավելի ևս բացահայտ են դառնում, երբ այդ երկերը մոտիկից են դիտվում: Վերցնենք օրինակի համար, «Պարահանդես փողոցում» և «Կապիկների ցուցաբերումը» նկարները:

Փարիզը, որպես կուլտուրական մեծ կենտրոն և աշխատանքի ու գործունեության բազմամարդ քաղաք, վաղուց ի վեր հանդիսանում է Յրանսիայի սիրտը և ուղեղը: Այնտեղ է, որ սկիզբ են առել Յրանսիական Մեծ ունությունից և Կոմունան: Փարիզի աշխատավորությունը միշտ էլ իրեն հպարտ է զգացել ծնունդ տված լինելուն այդ երկու աշխարհաստան խոշոր եղելություններին, որոնք թեև ուղղակի ու վերջնական հաջողության չհանգեցին, բայց անջնջելի հետք թողեցին և ոգեշնչող ազդեցություն ունեցան ընդհանուր մարդկության սոցիալական հետագա առաջխաղացման համար:

Փարիզի աշխատավորությունը ամեն տարի սրտագին խանդավառությամբ է տոնում այդ երկու պատմական խոշոր իրադարձությունների հիշատակը. և եթե Կոմունայի տարեդարձը դեռևս տոնվում է միայն բանվորական և ինտելիգենցիայի առաջավոր խավերի կողմից, «Յրանսիական Մեծ ունությունից տարեդարձը», «Հուլիսի 14-ը», շատ վաղ ժամանակներից ի վեր տոնում է ֆրանսիայի ամբողջ հասարակությունը, բացառությամբ խոշոր բուրժուազիայի: Այդ օրը փողոցը ամբողջովին պատկանում է Փարիզի ժողովրդին: Բուրժուական իշխանությունները հանդիսատես են լինում, պատրաստ դանվելով միջամտելու միայն քրեական հանցանում,

գործուծյան զեւթում, որը սակայն այդ առթիւ Համարյա թե բնավ չի պատահում, որովհետեւ ժողովուրդը մասնավոր հարգանքով ու լրջութեամբ է վերաբերւում նույն նվիրական տոնախմբութեան հանդէս:

Անկարելի էր, որ Շահինը ռեալիստական իր ընտիր երկերի շարքում արժանի տեղ չտար ֆրանսիական ժողովրդական բարբերի և սովորութիւնների հրապարակային այդպիսի կարևոր մի արտահայտութեան:

Արդարև վարպետի լավագույն արտադրութիւններից մեկն է «Պարահանդես փողոցում» փորագրութիւնը (տես նկար 19), որը ցույց է տալիս Հուլիսի 14-ի ազգային տոնի առթիւ փողոցում կազմակերպւած մի պարահանգեսի տեսարանը:

Տեխնիկապես նկարն իրականացւած է զեղանկարչական տոնային փափուկ միջոցներով և ներդաշնակւած ու կենսավորւած լույս և ստվերի գրաֆիկական ուժեղ հակադրութիւններով: Զանազան տարիքի և սոցիալական խավերի պատկանող երկսեռ զույգեր պարում են բացօթյա մի քառուղու ծառերի տակ: Ժամը դիշերվա պահն է և տեսարանը լուսավորւած է վերեից, բազմաթիւ յայտնական գույնզգույն թղթի լապտերներով: Լույսի դիշերային այդ տպավորութիւնը, համարյա թե բնականին հավասար ուժգոյնութեամբ, ձեռք է բերված միայն գրաֆիկայի սև ու սպիտակ երանգների միջոցով:

Հայտնի է, որ պարողներից յուրաքանչյուրի հոգեկան տրամադրութիւնը նկարչի համար առանձին ուսումնասիրութեան նյութ է եղել: Նրանց դիմագծերի լուրջ արտահայտութիւնները որևէ անկերպարան, անգույն վիճակ չէ որ ներկայացնում են, այլ այն նկարագիրը, ինչ յուրաքանչյուրի վրա գրոշմել է առօրյա ապրումների և ունեցած հոգսերի բնույթը: Պարող զույգերից այն, որ երեւում է նկարի ձախ անկյունում, բաղկացած է ծագումով գյուղացի մի այր և կնոջ կերպարներից: Տղամարդը ձգնում է հարմարվել իր տանտիկնոջ պարի ոչ շատ ճկուն, ութմիկական շարժմանը և այդ պատճառով նա ձախ ձեռքով պինդ սեղմում է ծանրամարմին կնոջ մեջքը: Ամբողջութեան մեջ առանձնապես ուրախ գույգեր են կազմում՝ նկարի կենտրոնում լույսի մեջ պարող հարգեցածը գլխար-

կով երիտասարդ աղքատ ուսանողը և նրա ընկերուհի միտինետը, իսկ ավելի մոտիկ պլանում երկու կայտառ փոքրիկ աղջիկներ, մինը խարտյաշ, իսկ մյուսը թուխ մազերով, որոնք ուստոստուն, շեշտված շարժումներով ուզում են հետեւել մեծերի պարին:

Պարահանգեսի ժողովրդական բնույթը բացահայտ է: Նկարագրված զույգերից բացի, նշմարվում է նաև կենտրոնին մոտիկ պլանում, բծերով զարդարուն սպիտակ շրջազգեստով մի նուրբ, բարեձև օրիորդ, որը չի մերժել, համեստ, բավականին տարեց մի բանվորի իրեն արած պարի առաջարկը: Նա, գլուխը թեև մի քիչ բանվորի իրեն արած պարի առաջարկը, բայց հաճոյակատարութեամբ է հետևում նրա պարային քայլափոխութիւններին: Ավելի մոտակա պլանի վրա, նկարի աջ անկյունում, պատկերված է շափահաս, սևազգեստ, բարձրահասակ մի կին, որը պարում է գեղջիկական երևույթով մի կարճահասակ երիտասարդ կնոջ հետ:

Պատկերի խորքում, նվազածուրի ձախ կողմը, լույսի մեջ ողորուն, թեթևակի նշմարվում է նաև մի հասակավոր, թաղիքեզ զքնդուն, թեթևակի նշմարվում է նաև մի հասակավոր, թաղիքեզ զքնդուն դաձև գլխարկով և մորուսավոր մի մարդ, որը մանր բութուական դասին է պատկանում: Նա ևս մասնակցում է պարահանգեսին մի երիտասարդ կնոջ հետ: Իսկ նվազածուն, ժողովրդական մի տիպար, նստած փոքր ինչ բարձր գիրքի վրա, իր ակկորդեոնի հարուցած պարային սուր կամ թավ երաժշտական ալիքներով ութմ և ոգևորութիւն է տալիս պարողներին:

Այդ օրը, Փարիզում, ավելի ճոխ նվազախմբերով պարողներ լինում են անշուշտ, բայց այստեղ Շահինը ուզեցել է բանվորական մի համեստ թաղի տիպական պարահանգեսը ցույց տալ մեզ:

Նկարում շատ ցայտուն կերպով են արտահայտված պարողների ութմիկ շարժումները, որոնք գրաֆիկորեն իրականացվել են ոչ միայն ձեռքերի և ոտների տեղափոխութիւնների ճիշտ պատկերացումով, այլև կանանց երկար, զանգակաձև քղանցքների օգային դարձգարձիկ ալեծիումներով:

Պատկերի բոլոր տարրերն իրենց նկարագրի տարբեր և հակադրական կողմերով ու մանրամասնութիւնների ցուցաբերումով իրականութեան լուրջ պատկերացումն են տալիս և բնավ առիթ չեն ընձայում որևէ երգիծաբանական մտքի: Նկարագրի այս գիծը, որը

ձեռանի գերակատարների խնդրատակութիւններին: Բազմութեան մեջտեղը, ոտի կանգնած գեռատի աղջիկը ժպտում է մեզմ կերպով, իսկ բեմի մոտ մի երիտասարդ կին թերթիկով դեպի կապիկները, ինչ որ զվարճալի մի բան է ասում նրանց: Դարձյալ բեմի առաջ՝ ձեռները գրպանում և խորամանկ ժպիտը դեմքին՝ կանգ է առել նաև փողոցի ստահակ մի տղա:

Շեշտված ժպիտով, նկարի ձախ կողմից մայթի վրա առաջանում է արևելքցու տիպով մի այլ մարդ: Բազմութեան մեջ կան նաև անգործ բանվորներ, մի ծերուկ հասակը կրած, ընչազուրկ, շեկ և թուխ կանայք, ամեն միւր առանձին կեցվածքով ու հատկանշական արտահայտութիւններով: Մենք դեռ չենք խոսում նկարի խորքում պատկերված տոնավաճառի շարունակութիւնը կազմող ուրիշ մանրամասնութիւնների մասին, որոնք երկի շարագրանքը ճոխացնում են իրականից առնված հետաքրքիր նորութիւններով:

Դժվար է երևակայել մտքի այն ներուժ թափը և տեխնիկայի բարձր ճարտարութիւնը, որոնք անհրաժեշտ են գլուխ բերելու համար նմանօրինակ բարդ գործեր, որոնց շարքին է պատկանում նաև նշանավոր «Բուշակուհի»-ն (1907 թ.):

Զարմանալի չէ ուրեմն, որ այդ երկերը պատկանում են Շահինի ստեղծագործական երիտասարդ շրջանին, ուր նա կարողանում էր ի հայտ բերել անսպառ ավյուն և՛ ուշադրութիւնն ու երեվակայութիւնը շարունակ լարված ու սևեռուն պահելու բացառիկ կարողութիւններ:

4. ՊԵՅՁԱԺՆԵՐ

Շահինի պեյզաժները ունեն անմիջական գրավչութիւն և տեվական հմայք: Նրանք հասնում են բնութեան մթնոլորտային թարմ տպավորութիւններին, իրականացնում նրա արեաշող պայծառութիւններն ու մտերմիկ շերմութիւնը, միևնույն ժամանակ պահպանելով բնութեան հեռանկարչական շեշտված տպավորութիւնները:

Քանակով և որակով նրանք նշանակալի տոկոս են կազմում մեր ակնավոր օֆորտիստի ամբողջական գործերի շարքում:

Առաջին տարիներին, Շահինը տեսարանները վերցնում էր ընդհանրապես Փարիզի զանազան անկյուններից կամ արվար-

ձաններից և այն ծառայեցնում որպես ֆոն իր ժողովրդական կենցաղային թեմաների պատկերման համար: Իսկ հետագայում սկսեց նկարել նաև սոսկ պեյզաժներ, որոնք ազատ բնութիւնից վերցված էջեր են, երբեմն նույնիսկ անմարդաբնակ տեսարաններ: Մեծ տեղ են գրավում, նույնպես, առանձին սերիայով կազմած Շահինի խալական և մանավանդ վենետիկյան տեսարանները: Պեյզաժային աշխատութիւններից հիշենք մի քանի գլխավոր գործեր, պահպանելով՝ որքան կարելի է՝ ժամանակագրական կարգը:

Փարիզի միջավայրից են առնված «Ալիքտի ջրանցքը» և «Կլիշիի հրապարակը» (երկուսն էլ 1900 թ.), «Հին Փարիզը» (1903 թ.), «Փոքր տոնավաճառը» իր բովանդակությամբ հատկանշական մի տեսարան է, փորագրված 1904 թ.: (Տես նկար 21): Այս նկարը (32x44,5 սմ.), մեզ ցույց է տալիս քաղաքի ծայրամասերում գտնվող բանվորական արվարձաններից միւր իր լերկ ու խոպան գացաստանով, ուր աշնանավերջի մի կիրակի առավոտ, ինչպես՝ բացաստանով, ուր աշնանավերջի մի կիրակի առավոտ, ինչպես՝ բացաստանով, թվում է մեզ, աշխատավորներ եկել են իրենց ընտանիքով մի քիչ թարմ օդ շնչելու և արևի տակ հանգիստ առնելով ամբողջ շաբաթվա հոգնութիւնները մի կերպ մոռանալու համար:

Դաշտի հեռավորութեան վրա, ուր ոչինչ չկա մասնավորաբար հրապուրիչ՝ երևում են լարախաղացների դրոշագարդ կայմերը իրենց երկարածիգ պարաններով, որոնցից մեկի վրա, զգուշ քայլերով, առաջանում է լարախաղաց կինը, ձեռին բռնած մի բացված հովանոց, հավասարակշռութիւնը պահպանելու համար: Ներքեում համախմբված խայտաբղետ բազմութիւնը դիտում է նրա վտանգավոր խաղերը և ապրում երկյուղով խառն հուզումնալից բողբոջներ: Մարդկանց ազատ խմբեր ուղղվում են դեպի լարախաղացների ներկայացման վայրը, իսկ ուրիշները՝ հողի բարձրութիւնների վրա նստած՝ հեռվից են դիտում կամ իրար հետ խոսակցում:

Նշանակալից դեր են կատարում ստվերների բաշխումը և նրանց համեմատական ծավալային ձևավորումները Շահինի նկարներում, և այս ուղղությամբ ցուցաբերած նրա բացառիկ ճարտար-

բությունը մոտեցնում է նրա ոճը հոլանդացի աշխարհահռչակ մեծ վարպետի արվեստին:

Մեր ուսումնասիրած նկարի աջ անկյունից դեպի առաջ երկարող ստվերի մեծ տարածությունը շրջանակելով ընդգծում է պատկերի հեռավոր մասի ընդարձակությունը, իսկ մարդկանց դետնի վրա ձգած երկար ստվերները ցույց են տալիս աշնանային արեգակի ցածր դիրքը, օրերի կարճությունը և այդ կիրակի օրվա, հանգստի ժամերի շուտ անցնելու գաղափարը, որը շեշտում է պեյզաժի ընդհանուր մեղամաղձիկ տրամադրությունը:

Իմաստալից են նաև նկարի ձախ անկյունից դեպի տեսարանի խորն առաջացող երկու կանանց նկարները: Նրանք տարիքոտ կանայք են, որոնք աչքերը գետնին հառած և քղանցքներն երկու ձեռներով վեր բռնած գնում են զգույշ քայլերով: Այս բնականորեն դիտված մանրամասնությունը մեզ ենթադրել է տալիս, որ նախապես եղանակն անձրևոտ է եղել, որի հետևանքով գետնի երեսին մնացել են ջրի լճացումներ և ցեխոտ մասեր, որոնց վրայով այդ երկու կանայք աշխատում են անցնել զգուշությամբ:

Տեսարանի հորիզոնը սահմանափակվում է անջրդի բլրի մեզմբ բարձրությունով, որի գագաթից գնում է մի ճանապարհ: Այնտեղ կանգ են առել հեծանիվով երիտասարդներ, որոնք ուշադիր նայում են լարախաղացներին, իսկ ուրիշներ զբաղված են ինչ-որ ուտելիք կամ խմելիք վերցնելով ճամբի եզրին հաստատված մի շրջիկ վաճառողից: Ավելի հեռուն նույն ճանապարհի վրա կանգնած այլ երիտասարդներ վիճելու երևույթ ունեն:

Այդ բոլոր մարդկային կերպարները, սկսած առաջին պլանի համեմատաբար խոշոր սիլուետներից, մինչև հորիզոնի վրա մանրադիտական կետի վերածված մարդիկ, թեև քիչ տեղ են գրավում պեյզաժի ընդարձակության մեջ, բայց ապրում են իրական կյանքով, ու, սերտորեն կապվելով տեսարանին, ցույցնում են նրա միջավայրը հիանալի կերպով:

«Բոշաների կյանքը» պատկերող և մանավանդ «Պատերազմի թշվառությունները» նկարագրող իր օֆորտների շարքով անմահացած Ժակ Գալլոյի (1592—1635 թթ.) օրերից ի վեր հազվագեղ է գտնել մի ուրիշը, որ նկարի այնքան փոքր մակերեսում Շահինի

շափ հասած լինի բնության, իրերի և մարդկանց մեծության ու միջոցի ընդարձակության և տարածության պատկերացումը տվող այդպիսի վարպետություն:

Մանրամասնությունները, որոնց վրա մերթ կանգ է առնում Շահինը, անշուշտ արդարանալի են այն իմաստով, որ նրանք շեշտում են և ուժեղացնում իր շարադրանքների ռեալիստական նկարագիրը: Այստեղանդերձ, Շահինի պեյզաժները և առհասարակ նրա զուտ թեմատիկական մյուս գործերը կատարված են մեծ ժուժկալությամբ, առանց ավելորդ խճողումների:

Շահինի պեյզաժային օֆորտների շարքում կան տեսարաններ քաղաքի կանաչազարդ վայրերից, ինչպես՝ «Այուսեմբուրգի պուրապուր» (1912 թ.), «Քյուտ Ծամնի պարկում» (1913 թ.), «Պուա դը Բուլոնյի անտառակում» (մի քանի տարբերակներով), կամ թե՛ հա-սարակական շենքերը իրենց շրջապատով, ինչպիսին են «Փարիզի սարակական շենքերը» (այլազան տարբերակներով) (տես նկար 22), «Սեն Սեվրեն» (1905 թ.), «Պոն Նյեֆի տները» (1903 թ.) և այլն, և կամ ծառերով հատկանշված տեսարաններ, ինչպես օրինակ՝ «Ուոիները» և «Շագանակենիները», երկուսն էլ նկարված 1915 թվականին:

Շահինը հետաքրքիր փորագրությունների վրա նշել է նաև գյուղական վայրերում կառուցված առանձնատներ, որոնք պատկանում են նշանավոր և շատերի կողմից սիրված անձնավորու-թյունների կամ իրեն ծանոթ մտերիմ մարդկանց: Ինչպես Անատոլ թյունների կամ իրեն ծանոթ «Լաբեշլերի» (1909 թ.), կամ թե՛ Ֆրանսի աճառանոց-բնակարանը «Լաբեշլերի» (1912 թ.) Շարբոնում, «Տնակը ջր-«Էդաբելլա մայրիկի խրճիթը» (1912 թ.) և այլն:

Շահինի զուտ պեյզաժային երկերի մեջ առանձնապես աչքի արգելալի մտ» (1915 թ.) (տես նկար 23), և այլն:

Շահինի զուտ պեյզաժային երկերի մեջ առանձնապես աչքի է ընկնում նրա մեծադիր փորագրություններից մեկը «Սենա գետը և Կուրբելուայում» (նկ. 1906 թ. մեծութ. 29,5×46 սմ.) նկարը: (Տես նկար 24):

Կուրբելուան, Փարիզի հյուսիս-արևմտյան սահմաններում հաստատված աշխատավորական կարևոր շրջաններից մեկն է: Նրա կողքով է անցնում Սենայի խոշոր օձապտույտ ուղիներից միընդհանուր է անցնում գնում է ամայի ավուները: Գետի աջ ափին, որը տեղ-տեղ սահում գնում է ամայի ավուները: Գետի աջ ափին, որը տեղ-տեղ սահում գնում է ամայի ավուները: Գետի աջ ափին, որը տեղ-տեղ սահում գնում է ամայի ավուները:

Յին փորագրութիւններն մի արժեքավոր հավաքածո, որը՝ «Տպա-
վորութիւններ Իտալիայից» ընդհանուր խորագրի ներքո՝ մի ան-
հատական ցուցահանդես սարքելու առիթ ընծայեց:

Պեյզաժային առատ հունձք ձեռք բերեց նաև համաշխարհա-
յին առաջին պատերազմից հետո Իտալիա կատարած ուսումնա-
սիրական երկրորդ մեծ ճանապարհորդութիւնից, աշխատելով այս
անգամ գլխավորաբար Վենետիկում:

Վաղուց ի վեր շատ հռչակավոր վարպետներ ինչպես Կանա-
լետոյից մինչև Ֆելիքս Զիմ, Պրանկլին և Վիտալեր, աշխատել են
նկարել «Դոժերի երբեմնի մայրաքաղաքի» կամ այլ կերպ կոչված
«Ազրիականի գոհար»-ի, այսինքն Վենետիկի գլուխական տեսա-
բանները, բայց ոչ ոք չի կարողացել սպառել գեղեցկութեան այդ
անհուն գանձարանը: Եահինը իր կարգին, հետադուտելով նկարչա-
գեղ մտախմբումը հարուստ գեղարվեստի այդ անսպառ հանքը, ի
լույս բերեց օֆորտի և չոր սանդի միջոցով իրականացված բոլո-
րովին նորարժեք պատկերացումներ: Արդեն ուսանողական շրջա-
նից նա լավ էր ճանաչում Լակյունների ֆաղաքը. ծանոթ էր շատերի
կողմից անտեսված նրա մտերիմ անկյուններին, բնակչության
համեստ և չքավոր խավերին. սովորած էր նույնիսկ նրանց ճովող-
յուն քաղցրահունչ բարբառը: Ուստի, միանգամ ընդ միշտ մեկ
կողմ թողնելով մի շարք նկարիչների հաճախ հեղեղած մտախմբե-
րը, դքսական պալատներն ու Սանթա-Մարիաները, ինչպես և հա-
րուստ բուրժուազրոսաշրջիկները, որոնք օրն ի բուն զվարճանում
են սուրբ Մարկոսի հրապարակում թուշխոտող ընտելացած աղավնի-
ների հետ, — Եահինը գնում է քաղաքի բնիկ ժողովրդի մոտ
ուսումնասիրելու համար չքավոր տիպեր, արհեստավորներ, տեղա-
կան նկարագիրը պահելու նախանձախնդիր եղող շալավոր կա-
նայք, բոկոտն երեխաներ. կամ թե նկարում է անհուն երկնակա-
մարի տակ տարածվող ջրի ընդարձակ տարածութիւնները, հա-
մայնապատկերներ սուրացող սպիտակ առագաստանավերով: Նոր
գիտողութեամբ իրականացված այդ հետաքրքիր օֆորտների հա-
վաքածուն ցուցադրվելով Փարիզում մեծ տպավորութիւն թողեց,
մի անգամ ևս ապացուցելով Եահինի փորագրութիւնների առանձ-
նահատուկ բարձր արվեստը:

Այդ առթիւ նվիրագործվեց իր անունն ու պատվավոր տեղ
գրավեց «Վենետիկյան նկարիչների» աշխարհահռչակ շարքում:

Նույն ցուցահանդեսի կատարողում, Ֆրանսիայի ականավոր
գրող և արվեստաբան Կամիլլ Մոկլերը ասել է. «Վենետիկի մեջ,
Եահինը, ինքնատիպութեան մրցանիշը շահեց հազար փորագրիչ-
ներից հետո, նույնիսկ Վիտալերից հետո, որ նրանց բոլորին
նսեմացրել էր: Այստեղ, ինչպես Իտալիո մնացյալ մասերում, նա
ցույց տվեց իր կարողութիւնը քաղելով ուրիշներից չնկատված
տպավորութիւններ... Պերճանքի Վենետիկը թողնելով գեղամոլնե-
րին և կոսմոպոլիտներին, նա դիտում, սիրում է չքավոր Վենետի-
կը, ճշմարիտը. ու կանանց, որոնք ապրում են այդ աղքատու-
թեան մեջ»:

«Բայց ինչո՞ւ փորձել դժգույն և հաջորդական բառերով ար-
տահայտել այն, ինչ որ պղնձե տախտակի վրա փորագրված մի-
ջանի դժերի հմայքը այնքան հստակորեն գրավում են հայացքը:
Մարդ տեսնում է այնտեղ լույսն ու օդը և խաղաղ մակերեսով
ջուրը, որի մեջ շրջված երկինքը աղու անդունդներ է բաց անում.
տեսնում է քարերը, որոնց սիրեց Ռսկինը, և մարմարների վրա
ցնցոտիները, աշխատութեան և ծոփութեան որջերը, դժգույն բան-
վորուհիները արևի տակ, և այդ մուրացկանուհին, որ ուժասպառ
կրում է, և այդ տղաները, որոնք խաղում են. ու մարդ լսում է
Վենետիկյան բարբառը, որ ջրի պես կարկաչում է: Ա՛յդ, կյանքն
է վերարտագրված: Հասնելու համար դրան, պետք էր այդ հոգին,
որ ատակ է ամեն ինչ ըմբռնելու, և այդ նայվածքը, որից ոչինչ
չի խուսափում, և այդ ձեռքը, որ կարող է ամեն ինչ արտահայ-
տել»¹:

¹ Մոկլերը ծնված 1872 թ., եղել է Ֆրանսիացի գրող, բանաստեղծ և ար-
վեստի հայտնի քննադատ: Մոկլերը կատարել է պայքար արվեստի ֆորմալիստական
ուղղութիւնների դեմ, փարիզյան հանրաժանութի թերթերի էջերում և առանձին
գրքերով: Ֆրանսիացի մի այլ ծանոթ գրող և թատերական վարիչ Լյուսյե-Պոլի
հետ հանդիսացել է հիմնադրիչը, Փարիզի «Բեատորը դը Լյեվրը» (Théâtre
de l'Oeuvre) թատրոնի, որի նպատակն էր Ֆրանսիական հասարակութեանը ծա-
նոթացնել օտար դրամատուրգների նշանավոր երկերին:

Եթե Իտալիա կատարած 1905 թ. առաջին ուղևորության ընթացքին Շահինը առավելապես ուշադրություն էր դարձնում բնության և տիպարների մանրամասնություններին և նկարչագեղ կողմերին, ու այդ նպատակի համար դիմում էր կոնտրաստային միջոցների, վենետիկյան երկրորդ մեծ ճանապարհորդության ժամանակ նա հետապնդեց իրականացնել գլխավորապես միջավայրին հատուկ լույսի թափանցելությունները, տեսարանների հորիզոնական ընդլայնումը և բնության քնարերգական կողմերը (տես նկար 25):

Հետագայում, Շահինը ղեպի Իտալիա կատարած նոր ճանապարհորդություններով ճոխացրեց իր «վենետիկյան» օֆորտների շարքերը, մանավանդ Մորիս Բառեսի «վենետիկի մահը» գրքի պատկերազարդումները կատարելու առթիվ:

Առանձին խմբի մեջ կարելի է դասել Փարիզի դանադան հրապարակներից, փողոցներից կամ քարափներից Շահինի նկարած այն տեսարանները, որոնք որոշ առնչություն ունեն շինարարական աշխատանքների հետ: Այդ շարքին են պատկանում կառուցող ձեռնարկների հաշվին աշխատող բանվորների և բեռնաքար ձիերի մասին մեր արդեն վերևում թված փորագրությունները (էջ 46):

Նրանց մեջ շինարարական թեմայով կատարած ամենից ավելի տիպական գործը անկասկած «Մետրոյի աշխատանքները կոնկրետի հրապարակում» անվան տակ ծանոթ փորագրությունն է, որը Շահինի խոշոր և միևնույն ժամանակ կարևորագույն գործերից մեկն է: (Տես նկար 26):

Այդ նկարում մեր առաջ պարզվում է Տյուրլըրի պարկի հեռավոր մուգ խորքի վրա պատկերված՝ մետրոպոլիտենի շինարարության բացավայրը, ամբողջովին ողողված արևի լույսով:

Նույն ակնախտի լուսավոր ֆոնի վրա, ստվերների ուժեղ հակադրություններով ցցվում են բետոն շաղախով մեքենան իր մի խումբ ծառայող բանվորներով. միջին պլանում երկու թիկնեղ Պերլերոն ձիեր, որոնք, ծանր շինանյութերով լի մի կառքի լծված, իրենց ամբողջ ուժով քարշում են բեռը տեղ հասցնելու համար. իսկ նրանց վրա հսկող երկու բանվորներ, բուն շարժումներով, խարազանի հարվածների տակ խթանում են կենդանիներին, նրանց

ճիգը կրկնապատկել տալու համար: Հիշված բոլոր տարրերը, իրենց հարակից մանրամասնություններով, ճշմարտացիությամբ շաղկապված իրար հետ, ընդգծում են շինարարական աշխատանքների տաժանելի բնույթը:

Բացի զաղափարական գեղարվեստական կողմերից, նկարը որպես անհերքելի փաստ, ցույց է տալիս նաև, որ Փարիզի նման կուլտուրապես առաջավոր նկատված և հարուստ մի միջավայրում այդ ծանր աշխատանքների համար դեռ գոյություն չունեի ինքնաշարժ փոխադրականների և առհասարակ մեքենայացված գիտական միջոցառումների օգտագործման մտահոգությունը:

Բացի Փարիզի և նրա արվարձաններից վերցրած, ինչպես և Իտալիայից բերած տեսարաններից, որոնք կազմում են իր պեյզաժային գործերի կարևորագույն և ստվար բաժինը, — Շահինը քիչ անգամ է առիթ ունեցել է այնուհետ անելու Ֆրանսիայի այլ շրջաններում:

Նա ունի ուշադրավ տեսարաններ գլխավորաբար Շարպոնից (Շարտրի շրջան), ուր երբեմն այցելության էր գնում իր տարեկից ընկերոջ Տիգրան Պոլատի մոտ: Այնտեղից են առնված Երևանի պետական պատկերասրահի հավաքածուում գտնվող «Շարպոնի ընդհանուր տեսարանը», «Իզաբելա մայրիկի տնակը», «Միջատան ընդհանուր տեսարանը», «Իզաբելա մայրիկի տնակը» և «Ծառերի էտյուդ» օֆորտները, բոլորն էլ նկարված 1912 թ.:

Նա 1930 թ. եղել է նաև Բրետանի հարավային ափերին, Կրուազիկում (ձկնորսական փոքր նավահանգիստ Ատլանտյան օվկիանոսի վրա) և Մանշի ծովափին վիլլեր սյուր-մերում, որտեղից օֆորտով կատարել է ծովեզրյա մի քանի տեսարաններ:

Ամառային գյուղագնացության առիթներով, որոշ թվով պեյզաժային ուսումնասիրել ու փորագրել է նաև հետևյալ վայրերից. Պուլոն (Գյուլե-Սեվրը գեղարտամենտում, 1915 թ.), Գոնֆլան Գուլոն (Գյուլե-Սեվրը գեղարտամենտում, 1920 թ.), Պրովեն (Լի-Մարնի և Սենայի միացման վայրի մոտ, 1920 թ.),

1 Տիգրան Պ. Պոլատը ծնված Ալեքսանդրիայում (Եգիպտոս) 1874 թ., նույնպես տաղանդավոր օֆորտիստ է, երկար տարիներից է վեր Ֆրանսիա հաստատված և այնտեղ գնահատված:

շրջանակի մեջ շարժվող և սեփեկթնեքով պայմանավորված մարդկանց փոխհարաբերությունները, որոնց հոգեբանական բարդ կացությունների պատկերը հարկ էր տալ: Իսկ Շահինի արվեստը հիանալի կերպով ի վիճակի էր այդ անելու:

Շահինի վեներտիկում կատարած բազմաթիվ նկարչական էտյուդները առատ նյութ են տվել նաև Մ. Բարեսի «Վեներտիկի մահը» գրքի համար: Բարեսը, իր գործը պատկերազարդված կերպով հանրության ներկայացնելու համար, չէր կարող «Վեներտիկյան ժամանակակից նկարիչների» շարքում գտնել Շահինից ավելի արժանավոր մեկ ուրիշը:

Ամփոփելով մինչև այժմ մեր ասածները, կարելի է ընդգծել, որ գրքերի պատկերազարդման հարցում Շահինը միշտ գտնվել է լուծման ճիշտ և լավագույն ուղու վրա: Նա չի սիրում ընդօրինակել կամ կրկնել. ուստի և տառացիորեն չի հետևում հեղինակի բնագրին, այլ նրա թեմայի էությունը թափանցելուց հետո տալիս է նրա բովանդակությունը լայնացնող և հարստացնող կոնկրետ պատկերացումներ: Շահինը վիպասանի հղացումների հետ համեմատելիս՝ իր մտապատկերներով նկարչորեն լրացնում է այն: Գրական հեղինակության վրա նա ավելացնում է իր նկարչի հեղինակությունը, նրան տալով է՛լ ավելի համողականություն և հմայիչ տեսք: (Տես նկար 29):

Մի խոսքով, Շահինի աշխատակցությունը, որպես պատկերազարդող, մի նոր որակ է ավելացնում գրական երկի վրա, և այդ կերպ ամբողջացնում ու ճոխացնում է այն:

Բացի առանձին և ինքնուրույն պատկերազարդ հատորներից, Շահինը աշխատել է նաև ուրիշ արվեստակիցների հետ համագործակցաբար պատկերազարդելով որոշ հրատարակություններ, ինչպես օրինակ Վիրգիլիոսի «Մշակակամֆի» ֆրանսերեն ղեղարվեստական մի նոր հրատարակությունը, որը՝ լատիներենից թարգմանված Աբբա Դըլլիի կողմից՝ լույս տեսավ 1929 թ.: Այդ հատորն իրենց գրաֆիկական ինքնատիպ գործերով զարդարող 16 արվեստագետների շարքում, Շահինից զատ, կար նաև նրա մոտիկ ընկեր՝ Տրգրան Պոլատը:

Եթե մենք վերջի հերթին թողեցինք մեր մեծանուն օֆորտիստ պորտրետների մասին խոսելը, թող շկարծվի թե նրանք արվեստագետի ստեղծագործության երկրորդական, նվազ կարևոր մասն են կազմում. բնահակառակը, պորտրետային ստեղծագործությունները կազմում են Շահինի թողած գրաֆիկական հարուստ ավանգի էական և ամենից ավելի հատկանշական բաժինը:

Նա հաճախ ասում էր ինքն իր մասին, թե ամենից առաջ «պորտրետիստ» է: Արդարև, մարդկային հոգեբանական կացություններ պատկերելիս նա միշտ փնտրել է նկարելիք անհատի ուրույն բնորոշիչ կողմերը, նրա ներքին և արտաքին գոյակցության միաձուլլ արտահայտությունը:

Նկարչական այդ ուսուցողական վերաբերմունքի և մոտեցման շնորհիվ, որը գիմանկարչական ստեղծագործության էական պայմաններից միսն է, որպես պորտրետներ կարող են նկատվել ոչ մասններից միսն է, որպես պորտրետներ կարող են նկատվել ոչ միայն Շահինի «Մուրացիկ»-ները, «Անգործ» բանվորները, կամ իրենց վաղանցուկ երիտասարդ ղեղեցիկությունը զոհաբերող դժիրենց վաղանցուկ երիտասարդ ղեղեցիկությունը՝ «Ժիկոլեաները» և կամ բախտ ազլիկները «Միտինեաներն» ու «Ժիկոլեաները» և կամ «տոնավաճառներում» խոնված բազմություններն ու այլազան տիպարները, յուրաքանչյուրն իր բնորոշ հատկանիշերով, այլ նաև իրենց տեսակին մեջ, պայմանական որոշ առումով, պորտրետներ են նույնպես կենդանիները (առանձնապես ձին), նկարչի կողմից նկարված բնորոշ տունը, ծառը և այլն:

Շահինի արվեստով հետաքրքրվող անձանցից ո՛վ չի հիշում «Լուիզ Ֆրանս»-ը, նրա ամենակարկառուն պորտրետային գործը, (տես նկար 30): Այդ աշխատությունը կապված է Շահինի անվան հետ այնպես, ինչպես «Ջիոկոնդա»-ն Լեոնարդո դա Վինչիի և «Բոհեմուհին» Ֆրանց Հալսի անունների հետ:

Հիշված սույն նկարների նման «Լուիզ Ֆրանս»-ը ժողովրդականություն շահած մի գլուխ-գործոց է, և ինչպես որ Լեոնարդո դա Վինչիի կամ Հալսի անուններն հիշելիս խսկույն, և առաջին հերթին, մեր մտքի մեջ արթնանում է մեկի «Ջիոկոնդա»-ն և մյուսի «Բոհեմուհին», այնպես էլ չի կարելի շատաբերել «Լուիզ Ֆրանս»-ի «Բոհեմուհին», այնպես էլ չի կարելի շատաբերել «Լուիզ Ֆրանս»-ի «Բոհեմուհին»:

բնավ չի փորձել օֆորտով մեռյալ բնություններ նկարել, ինչպես այդ արել է օրինակ 17-րդ դարի օֆորտիստ վարպետներից Վենլեսլաս Հոլլարը (1607—1677 թթ.):

Շահինը նկարում էր ծաղիկներ ու պտուղներ, բնության բացառապես գունազեղ այդ հարստությունները, պարզապես հազուրդ տալու համար իր դեպի երանգային զգացմունքներն ունեցած բնական հակումներին:

Առանց մանրամասնելու տարբեր թեմաներ բովանդակող Շահինի գունանկարչական երկերը, հիշենք նրա որդու Պիերի (Պետրոսի) պաստելով կատարված պորտրեն (1933 թ.), ինչպես նաև ամենավերջին ստեղծագործություններից Փարիզի «Հայ ազատ արվեստագետների միության» 1945 թ. ցուցահանդեսին ուղարկած և տեմպերայով նկարված 3 աշխատությունները «Ժողովրդական տոնավանդակ», «Արվարձանային տեսարան» և «Սպասում պարեհավորման համար», որը վերջին համաշխարհային պատերազմի հետ կապված մի կենցաղային հաճախազեպ երևույթ էր, այսինքն պարենների գնման համար փողոցում հերթի կանգնելը:

Եզրակացնելով պիտի ասենք, որ առհասարակ Շահինի գունանկարչական աշխատությունները, հակառակ իրենց ներկայացրած երանգային ակնահաճո հարուստ ներդաշնակություններին, չեն հասնում նրա օֆորտներում դիտված արվեստի խորությանը, նրանց ցայտուն արտահայտչականությունը, ոչ էլ կատարողական ինքնուրույն մեծ վարպետությունը:

Այսուհանդերձ իզուր չեն անցել մեր մեծ օֆորտիստի գեղանկարչական ջերմ ձգտումներն ու այդ ուղղությամբ յուրացրած նշանակալի փորձառությունը, որովհետև շնորհիվ դրան է, որ նա կարողացել է իր փորագրությունները զերծ պահել հին վարպետներից շատերի մոտ նկատված գծային շորություններից, ու նրանց տալ գեղանկարչական հմայք. մի բան, որ կազմում է Շահինի արվեստի մեծ առավելություններից մեկը:

V

ՇԱՀԻՆԻ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Շահինի արվեստը հստակ և ուղիղ ճանապարհով կապվում է իրական աշխարհի և այն պատկերելու ռեալիստական հայեցողության հետ: Նա տեսանելի իրականությունը պատկերում է արվեստագիտական խոր զգացումով, առանց բնական կարգ ու սարքի մեջ արհեստական շտկոտաբանություններ մուծելու, կամ ճոռոմաբանական բմահաճ փոփոխությունների ենթարկելու: Ուստի և նրա երկերը զերծ են ֆորմալիստական օտարոտի ծամածոություններից: Նա շարունակ հանդիսացել է բնականի և տիպականի նկարիչը: Նրա փորագրությունները նույնպես զերծ են ֆորտոնկարչական կամ նատուրալիստական ձգտումներից:

Իր ողջ ստեղծագործական կյանքում Շահինը երբեք հետամուկ չի եղել անցյալ պատմությունից թեմաներ վերցնելով սուբյեկտիվ ոգով մշակելու, այլ շահագրգռվել է միայն իր ապրած ժամանակի և շրջապատի հետ կապված իրական երևույթներով: Այդ պայմաններում, իրականությունը նկարելիս, նա չէր կարող անտարբեր մնալ սոցիալական երևույթների հանդեպ: Արդարև, լի հումանիստական խոր զգացմունքով, նա գլխա-

Արդարև արվեստագետի կազմավորման և ստեղծագործական առաջին քայլերի շրջանին էր, որ զուգադիպեցին համիդյան ռեժիմի անլուր խժոժությունները հայ ժողովրդի դեմ և նրա մասսայական կոտորածները (1895—1896 թթ.):

Եվրոպայի առաջավոր մտավորականությունն ու աշխատավորության առաջադիմական տարրերը միասնական բողոքի ձայն էին բարձրացնում կատարված ոճրագործությունների դեմ և կարեկցության ու համակրանքի մի ընդհանուր հոսանք ծայր էր տվել դեպի հայ տանջված ժողովուրդը: Այդ շարժման գլխավոր կենտրոններից միին էր հանդիսանում և Փարիզը, որտեղ՝ հեղինակավոր ձայներ՝ ժողովրդական միտինգներում ուժգին կերպով խարանում էին սուլթանական դահիճներին ու նույն ժամանակ մեղադրանքի ծանր խոսքեր ուղղում կապիտալիստական պատասխանատու շրջանակների հասցեին:

Գտնվելով Փարիզում, Շահինը թեև չէր ենթարկվում համիդյան սարսափների ուղղակի ազդեցությանը, բայց նա, որպես հայ և զգայուն արվեստագետ, խորապես կրեց նրանց սարսուռը: Նմանօրինակ ապրումներ փոթորկեցին իր էությունը, ուր տրամադրություններ առաջացան իր նկարչի հետաքրքրությունը մղելու դեպի մարդկային հասարակության դժբախտ խավերը:

Բուրժուական կարգերի պատճառով ծնված տնտեսական անհավասար պայմաններին մշտապես զոհ գնացող աշխատավորների տխուր կյանքը ռեալիստական ուժեղ լույսի տակ ներկայացնող իր անմոռանալի փորագրությունները, որոնցից միևնույն ժամանակ արտածորում է նաև հումանիստական խոր զգացում, — Շահինին դասում են մարդկության առաջադիմության և ազատագրման համար ծառայող հումանիստ մեծ արվեստագետների ընտիր շարքը:

Այժմ, ընդհանուր հանրագումարի բերելով Շահինի երկերում որ՝ նրա գերազանց արվեստով և ռեալիստական կուռ բովանդակությամբ կատարած օֆորտները՝ բացի իրենց ընծայած գեղարվեստական անգնահատելի վայելքից, ներկայանում են որպես անշնչելի, վճռական փաստարկություններ ժամանակակից բուրժուազիայի դատապարտության համար: Դրանում է Շահինի ստեղծագործական ավանդի խոշոր արժեքը:

VI

ՇԱՀԻՆԻ ԿԱՊԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏ

Միջինից քիչ վեր, բարեձև հասակ, ուշիմ և խելացի դիմագիծ, հետախույզ սուր ակնարկ, — սրանք են առաջին հերթին այն ընդհանուր գծերը, որոնք հատկանշում էին Շահինի անձնավորությունը:

Իսկ բնավորության ցայտուն կողմերը արտահայտվում էին իր մոտ, եռանդուն և դյուրահաղորդ նկարագրովն, առանց թեթևության կամ պարզամտության: Հարաբերությունների մեջ նա խնձոհուն էր և վերասպահ առանց սառնություն: Չուներ կեղծ համեստության քող, բայց չուներ և ինքնագովության կամ ցուցամուլական ունակություններ:

Չէր սիրում դինովնալ հաջողություններով, և չէր էլ ուզում արհեստական կողմնակի միջոցների դիմել նրանց հասնելու համար: Իր աշխատունակությունն ու փայլուն տաղանդը ինքնին արդեն բավական էին իր առաջ բաց անելու համար հաջողության դռները:

Արդարև արվեստագետի կազմավորման և ստեղծագործական առաջին քայլերի շրջանին էր, որ զուգադիպեցին համիդյան ռեֆորմի անլուր խժոժությունները հայ ժողովրդի դեմ և նրա մասսայական կոտորածները (1895—1896 թթ.):

Եվրոպայի առաջավոր մտավորականությունն ու աշխատավորության առաջադիմական տարրերը միասնական բողոքի ձայն էին բարձրացնում կատարված ոճրագործությունների դեմ և կարեկցության ու համակրանքի մի ընդհանուր հոսանք ծայր էր տվել դեպի հայ տանջված ժողովուրդը: Այդ շարժման գլխավոր կենտրոններն էին մինչ էր հանդիսանում և Փարիզը, որտեղ՝ հեղինակավոր ձայներ՝ ժողովրդական միտինգներում ուժգին կերպով խարանում էին սուլթանական դահիճներին ու նույն ժամանակ մեղադրանքի ծանր խոսքեր ուղղում կապիտալիստական պատասխանատու շրջանակների հասցեին:

Գտնվելով Փարիզում, Շահինը թեև չէր ենթարկվում համիդյան սարսափների ուղղակի ազդեցությանը, բայց նա, որպես հայ և զգայուն արվեստագետ, խորապես կրեց նրանց սարսուռը: Նմանօրինակ ապրումներ փոթորկեցին իր էությունը, ուր տրամադրություններ առաջացան իր նկարչի հետաքրքրությունը մղելու դեպի մարդկային հասարակության դժբախտ խավերը:

Բուրժուական կարգերի պատճառով ծնված տնտեսական անհավասար պայմաններին մշտապես զոհ գնացող աշխատավորների տխուր կյանքը ռեալիստական ուժեղ լույսի տակ ներկայացնող իր անմոռանալի փորագրությունները, որոնցից մինևնույն ժամանակ արտածորում է նաև հումանիստական խոր զգացում,— Շահինին դասում են մարդկության առաջադիմության և ազատագրման համար ծառայող հումանիստ մեծ արվեստագետների ընտիր շարքը:

Այժմ, ընդհանուր հանրագումարի բերելով Շահինի երկերում արծարծված սոցիալական բաղմաղան խնդիրները, կարելի է ասել, որ՝ նրա գերազանց արվեստով և ռեալիստական կուռ բովանդավեստական անգնահատելի վայելքից, ներկայանում են որպես անկոթյամբ կատարած օֆորտները՝ բացի իրենց ընծայած գեղարվեստական անգնահատելի վայելքից, ներկայանում են որպես անջնջելի, վճռական փաստարկություններ ժամանակակից բուրժուազործական ավանդի խոշոր արժեքը:

VI

ՇԱՀԻՆԻ ԿԱՊԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՀՅՑ

Միջինից քիչ վեր, բարեձև հասակ, ուշիմ և խելացի դիմադիծ, հետախույզ սուր ակնարկ,— սրանք են առաջին հերթին այն ընդհանուր գծերը, որոնք հատկանշում էին Շահինի անձնավորությունը:

Իսկ բնավորության ցայտուն կողմերը արտահայտվում էին իր մոտ, եռանդուն և դյուրահաղորդ նկարագրովն, առանց թեթևամտ, կամ պարզամտության: Հարաբերությունների մեջ նա խոթյան էր և վերապահ առանց սառնության: Չունեի կեղծ համեստության քող, բայց շունեի և ինքնագովության կամ ցուցամոլական ունակություններ:

Չէր սիրում զինովնալ հաջողություններով, և չէր էլ ուզում արհեստական կողմնակի միջոցների դիմել նրանց հասնելու համար: Իր աշխատունակությունն ու փայլուն տաղանդը ինքնին արդեն բավական էին իր առաջ բաց անելու համար հաջողության դռները:

հարատե գուրգուրանքով: Մոր մահից հետո է, որ (1925 թ.) Շահինը մտածեց ամուսնանալ:

Սկզբում սիրային զգացումները մի պահ կանգ էին առել մի ընտրության վրա, որին գծրախտարար մահը խլեց իրենից, ապա՝ ժամ կերպով:

Շահինը երկար ժամանակ անմխիթար մնաց այդ դառն հիշատակով:

Բավական հասուն տարիքի մեջ, 1927 թ., նա վերջապես ունեցավ մի կյանքի ընկեր, մի շատ երիտասարդ ֆրանսիացի գեղեցկուհի, որ հաճախել էր իր աշխատանոցը, որպես բնորդուհի (մոդել):

Այդ կենակցության առաջին տարիները, շնորհիվ մի տղա զավակի ծնունդի, անցան խաղաղ և, ըստ երևույթին, երջանիկ. բայց հետո, կյանքի վերջին տարիներին, մասնավանդ համաշխարհային պատերազմի աղետաբեկ շրջանին, խաթարվեց նրա ընտանեկան անդորրությունը: Կնիքը, որի մոտ թույլ էին ամուսնական նվիրվածության կապերը և չէր հաղորդվել ու մտերմացել իր արվեստագետ ամուսնու ընտիր հոգուն, անխնամ էր թողնում նրան և իր զավակին: Ծերացած հասակում, տաժանելի դրության մատնված Շահինը ստիպվում էր որդու և տան համարյա բոլոր հոգսը ինքը տանել:

Սենտ-Էտյեն քաղաքից, ուր սույն տողերը գրողը գտնվում էր կնոջ հետ, ժամանակավոր կերպով, Փարիզը ֆաշիստների կողմից գրավման նախօրյակից հետո, և թղթակցում էր Շահինի հետ, այդ օրերին թույլատրված խիստ կարճառուտ ձևով, մասնավոր բացիկների միջոցով, Շահինը այդ բացիկներից մեկում (1942 թ.) գրում էր.

«Նորապես շնորհակալություն, բացիկդ մեծ հաճույք պատճառեց ինձ, ուրախ եմ իմանալով, որ դուք երկուսդ լավ եք Սենտ-Էտյենում և մոտավորապես գոհ... Աշխատում եմ — այո — շա՛տ — բայց նաև պարապում եմ տան գնումներով և խոհանոցով, և այս հաճույակի ոչինչ ունի. որքա՛ն ժամանակի կորուստ ընտանիքը սնուցանելու համար» (ընդգծումները նույն ինքն Շահինի կողմից են արված):

Երբ ներկա տողերը գրողիս հաջողվեց Սենտ-Էտյենից վերադառնալ Փարիզ, Շահինի մոտ նույն տաժանը շարունակվում էր: Իր փորագրությունները չէին վաճառվում ինչպես որ հարկն էր: Պատերազմը ուրիշ մեծ ավերումների հետ քայքայել էր նաև գեղարվեստի ասպարեզը: Յուրմալիստական արվեստի արտադրությունները ողողել ու պղտորել էին հրապարակը:

Դեռ նախքան պատերազմը, մի օր Շահինը, ակնարկելով կյանքի տիրող զժվարացած պայմաններին արդեն ասել էր ներկա ուսումնասիրության հեղինակին. «Հիմա առջի ժամանակները չեն. ասենուք փորագրած տախտակս թեիս տակ կ'երթայի հրապարակչին մոտ, իսկույն կը գնահատվի և ապրուստս կ'ապահովվեր, մինչդեռ հիմա...»:

Այդ հետզհետե ծանրացող պայմաններին զիմադրելու համար Շահինը ստիպվել էր իր սեփական աշխատանոցը միջնորոմով բաժանել և կեսը վարձու տալ մի ամերիկացի նկարչուհու:

Ի վերջո, Շահինը ուժասպառ եղած, և կխտվին անդամալույծ, անկողին ընկավ և երկար ամիսներ տառապելուց հետո մահացավ 1947 թ. մարտի 18-ին:

Նրա թաղումը այնքա՛ն հասցեայ կերպով կատարվեց, որ կարելի չեղավ իր բոլոր ծանոթներին և հիացողներին իմաց տալ: Մտերիմ բարեկամների շրջանակից հազիվ հարյուրի շափ անձերի ներկայության տեղի ունեցավ հուղարկավորությունը:

Շահինի մոտ հայրենասիրական զգացումները շատ զորեղ էին. նա միշտ ցանկացել է, որպեսզի իրեն ընծայված փառք ու պատվից լայն բաժին հասնի իր պատկանած ժողովրդին:

Յույց տալու համար, թե Շահինը որքան հարազատ էր զգում ինքնիրեն, իր ազգակիցների և արվեստագետ հայ ընկերների շրջանակում, մենք այստեղ մեջ կբերենք մի հատված այն ելույթից, որը նա գրել էր հայերեն լեզվով և կարգաց 1937 թ. ապրիլի 13-ին, նույն տարում մեկը մյուսի հետևից վախճանված նկարիչ Վ. Մախոխյանի և ճարտարապետ Լ. Նաֆիլյանի կրկնակ հիշատակին նվիրված և Փարիզի «Հայ ազատ արվեստագետների միություն» կողմից կազմակերպված սգո երեկոյին, որի նախագահ նշանակված էր ինքը՝ Շահինը:

բակցութեան մեջ կատարած զլիսավոր հիմնադրի և պատասխանատու վարիչի դերից բացի (1926—1931 թթ.), Շահինը ինչպես արդեն հայտնվեց նախորդ էջերում, մասնակցել է նաև «Հայ ազատ արվեստագետների միութեան» (1931—1947 թթ.) ցուցահանդեսներին, գաղութահայութեան կազմակերպած բարեգործական շատ ձեռնարկներին, և հայ կուլտուրային նվիրված հրատարակչային հանդիսավորութուններին ոչ միայն իր հեղինակավոր արվեստագետի հարգված ներկայութեամբ, այլ նաև գործնականապես, իր ստեղծագործական աշխատանքների նվիրաբերութունով:

